

849

ՀՊԵՏ. ԲՓ. Ա. ԲՈՒԳՈՒՊԵԱՆԻ



ՎԱՐԴԱՐԻ =  
= ԱՐԵՒԾ

8-82

4-30

23 MAY 2005

12 NOV 2009

№ 1 (13) ՀՐԱՏ. ԲԺ. Ը. ԲՈՒԹՈՒՂԵՑՆԻ № 1 (13)

8-82

4-30 Ար.

ՎԱՐԴԱՐԻ

ԱՐԵՒԾ

1001  
9293  
001  
001

- |  |
|--|
| 1. Վարդարի Արեւը. 2. Հայ կամաւորներին. |
| 3. Արձիւների բնում.                    |

ԹԻՖԼԻՍ  
Տպարան Ժխափեան  
1915



## ԿՈՌԻՆԿԱՆԵՐԸ

... Աշնանային մի երեկոյ էր. Շրջակայ լեռների գագաթները շիկնել էին վերջալոյսի ճառագայթների տակ. Կռունկների մի երամակ, սեխն տալով ամպերի մէջ, ճօճուելով ու ոլորուելով, դանդաղ դէպի հարաւ էր չւում...

Աչքերս յառած դէպ' երկինք՝ երկար նայում էի նրանց ետևից, մինչև որ նրանք ծածկուեցին ամպերի ետևում. Չը գիտեմ ինչո՞ւ՝ մի ինչ-որ տիրութիւն պատեց սիրտը. ինձ թուաց, թէ այդ կռունկները կը մոլորուեն ճանապարհին և իրենց օթեւանը չեն հասնիլ: Նրանք թուչում էին տարածութեան միջով, չւում դէպի հեռուները. բայց այնքան անձուկ էր նրանց երամը, այնքան դանդաղ նրանց թոփչքը, որ կարծես նրանց էլ ինձ պէս ճնշելիս լինէր մի ծանր նախազգացում:

Եւ ես դեռ նայում էի դէպի նրանց անցած տարածութիւնը, երբ հեռուում մի սկ դիմ երևաց հորիզոնի վրայ, որը մօտենալով սաւանի ձև ստացաւ:

Ետ մնացած կոռւնկների մի փոքրիկ  
խմբակ էր այդ:

Գուրգուրանքով երկու կոռւնկ իրենց  
թևերի վրայ զգուշութեամբ տանում էին  
իրանց վիրաւոր ընկերոջը. ըստ երեսյթին  
նրանք շտապում էին մութը վրայ չը հա-  
սած համել ընկերներին:

— Աստուած իմ, բացականչեցի ես  
սրտիս խորքից. ինչպիսի կարեկցութիւն  
անբան թռչունների մէջ...

Եւ հաւատոս նորից վերադարձաւ և  
սիրտս ու հոգիս լցուեց յուսով ու եռան-  
դով...



ՀՕՅ ԱԶԱՏՐՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍ-ՄԱՐՏԻԿ

ՆԻԿՈՂ-ԳՈՒՄԱՆԻ

ԱՆՄԱՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հրատարակչից

## PER LA BOCA DE SU HERIDA

Per la boca de su herida...

Տարօրինակ, զարմանալի դարձուածք՝ ծը-  
նուած Սպանիայում և անհասկանալի սպանա-  
ցիներին անգամ. հայերէն կը նշանակէ՝ աղաղա-  
կել վէրքի... բերանով...

Վէրքի... բերան... մի սոսկալի խօսք, որ  
կարող էր միայն միջնադարեան Սպանիան հաս-  
կանալ և մարսել... Այնտեղ ամեն բանի  
վրայ իշխում էր գաղտնի հոգեոր դատարանը.  
և գիւղացու աղքատ խրճիթում, և թագաւորի  
շքեղ պալատում վախենում էին և դողում ինկ-  
վիզիտորների առաջ, որոնք ի փառս երկնքի և  
յանուն Քրիստոսի խարոյկներում այրում էին  
«մեղաւորներին»: Ինկվիզիտորները ոչ թէ միայն  
այրում էին, այլև չարչարում... նրանք աշխա-  
տում էին, որ զոհի վէրքը չը բուժուի, այլ  
մնայ բաց, ցաւի ու ցաւի... Կարծես վէրքը  
կենդանանում էր և խօսում, հեռում, աղաղա-  
կում իր... բերանով... Եւ այսպէս բազմաշար-  
չար սպանացիները գոչում, աղաղակում էին  
իրանց վէրքերի շրթունքներով...

Անցան դարեր։ Ահեղ հոգեոր դատարանը

կնքեց իր մահկանացուն, երբ փչեցին մարդկային ազատութեան գեղեցիկ հովերը: Սպանիան մոռացաւ իր ինկվիզիտորներին և խարոյկները, որ մարեցան, իսկ դարձուածքը՝ Per la boca de su herida մնաց իբրև մի յուշարձան: միայն նրա միտքը, նրա իմաստը իրանք սպանացիները այժմ չեն հասկանում, մեքենաբար կրկնելով նրան:

Բայց կայ մի ազգ, որը հասկանում է այդ սոսկալի դարձուածքը, նրա միտքը և իմաստը, և որը այսօր հևում է, գոչում և աղաղակում իր վէրքի շրթունքներով:

Այդ մազմաշարչար ազգը՝ հայերն են... ինկվիզիցիան վաղուց ի վեր բոյն է դրել մեզանում և դարեր շարունակ ինկվիզիտորները մեզ յօշուում են, սպանում, չարչարում, տանջում... Մեր վէրքերը վաղուց բացուած են, երբէք չեն փակուել, լայնանում են, մեծանում և ցաւում, ցաւում... կարծես ամբողջ ազգը մի մեծ վէրք է դարձել: Այդ վէրքը կենդանանում է: Մեր երեսները չեն տեսնում, երեսում են միայն մեր սոսկալի վէրքերը, և այսօր մենք գոչում ենք և աղաղակում մեր վէրքերի շրթունքներով...

Նենք թիւրքը, աւազակ քիւրդը, Աբդիւլ-Համիդներն և լնվերները դարձել են մեր դահիճ-ինկվիզիտորները:

Այսօր մենք աղաղակում ենք մեր վէրքերի շրթունքներով և սպասում ենք, որ մեծ Ռու-

սաստանը, գեղեցիկ Թրանսիան, հզօր Անգլիան լսեն մեզ և բուժեն մեր վէրքերը...

Վեց վիլայէթները մերն են, որովհետեւ առատօրէն ողողուած են հայի արիւնով. վեց վիլայէթները մեր արդար արեան գինն են: Եթէ իրաւ այս մեծ պատերազմը պիտի վերջապէս ճանաչել տայ փոքր ազգերի իրաւունքները՝ ապրելու, առաջադիմելու և զարգանալու. Եթէ այս պատերազմը պիտի ճանաչել տայ մինչեւ այսօր բռնաբարուած արդարութիւն և օրէնք, կուլատուրայ և ազատութիւն, մեր լայն, ցաւած վէրքերի շրթունքներով մենք պահանջում ենք՝ տալ մեզ այդ վեց վիլայէթները, որ բուժեն մեր վէրքերը, այն վէրքերը, որ ցաւում են Եւրոպայի շահախնդիր քաղաքականութեան շնորհիւ...

Ցաւում են մեր մեծ, ծանր և լայն վէրքերը... Բայց նրանք կը բուժուեն...

Դեղ կայ բուժելու...

Դեղը մի կտոր, մի բուռն հող է, բայց հայկական...

Մի կտոր, մի բուռն ազատ հայ հող...

Մենք արժանի ենք այդ հողին:

Մենք կը զոհենք և կը զոհուենք, Եթէ պէտք են ևս զոհեր...

Սպանացին ասում է՝ ես աղաղակում եմ իմ վէրքի բերանով. ասում է, իսկ ինքը չէ հասկանում այդ սոսկալի դարձուանքի միտքը և իմաստը:

Մենք չենք ասում այդպէս, բայց որչափ

մօտ է այդ գարձուածքը մեր մաշած սրաերին,  
հասկանալի, ես կառէի՝ սիրելի, եթէ միայն կա-  
րելի լինէր սիրել շղթաներ, սարկութիւն և վէր-  
քեր... \*)

Գր. Զալիսւշեան

## ՎԱՐԴԱՐԻ ԱՐԵՒԾ

(Մակեդոնական ապստամբութիւնից)

ԲԱՏ Ն. Ն. ԲԲԵԹԿՈ-ԲԲԵԹԿՈՎԱԿՈՒ

|

Մայիսեան տաք օրերից մէկն էր: Եզէյեան  
ծովի ալիքներն առանձին ծուլութեամբ, ակա-  
մայից զարկւում էին ծովափնեայ մութ, թաց ու  
արևի տակ փայլող ապառաժներին: Դեղին-կար-  
միր շերտաւոր ծածկի ստուերում, Սալոնիկի  
յայտնի «Խտալական» սրճարանի կլոր սեղանի  
շուրջը նստել էին տաճկական մի խումբ սպա-  
ներ, ծղոտներով պաղ «արոնչատա» էին ծծում  
և քաղաքի բամբասանքներից խօսում:

Երբեմն նրանցից մէկը կամ միւսը աշքերը  
կուչ ածելով գիտում էր ծովի անսահման տա-  
րածութիւնը, որի կանաչ-կապոյտին տուող հար-  
թութեան վրայ սահում էին զանազան առա-  
գաստանաւեր ու շոգենաւեր: Յաղթական ու  
հսկայամարմին զրահանաւերն իրենց սուր և ա-  
մուր կրծքով խոր ակոսում էին փրփրող ալիք-  
ները...

Սպաները գուշակում էին.

Հրատ.

\*) Մենք մեզ թոյլ ենք տալիս այս սիրուն յօ-  
դուածին աւելացնել հետեւեալ համամարդկային վեհ  
գաղափարը.—«Մի ժողովրդի փրկութիւնն ապահովուած  
կարելի է համարել այն ժամանակ միայն, եթե նրա բո-  
լոր գործերի մէջ անձնազոհութեան ու պարտքի գի-  
տակցութիւնն է խօսում»:

—Աւստրիական է, անգլիական, ռուսական, իտալական... յունական...

Միայն Ռեշադ բէյն էր, մի 26 տարեկան գնդապետ, որ չէր ուզում աւելորդ խօսքով իրեն նեղութիւն պատճառել և վերջապէս նրա համար միենոյն չէր թէ ինչ նաւեր են և ում դրօշակի տակ են մտնում Սալոնիկի նաւահանգիստը։ Ռեշադ բէյը կուշտ ու համեղ նախաճաշից և մի երկու ֆինջան թանձր անուշաբոյը տաճկական սուրճ ըմպելուց յետոյ հաւանայի սիգար էր ծխում և էնչպէս իսկական մուսուլման, թէպէտ Բերլինում կրթուած, իրեն մոռացութեան էր տուել ու քաղցր երազում էր։

Նա գեղեցիկ չէր։ Նրա անճոռնի ու տձե քիթն այլանդակում էր դէմքը։ Բերանը չափից աւելի մեծ էր, այնպէս որ ժպատալիս բացուածքը մի ականջից միւսն էր հասնում, որի ժամանակ փայլում էին ոսկով լցրած նրա առաջին ատամները։ Գլուխը տափակ էր, իսկ անհամաշափլայն ճակատի վրայ հազիւ գագաթը ծածկել էր փոքրիկ փէսը։ Վարպետի մօտից հենց նոր բերած հիանալի կարած շագանակագոյն զգեստն առանց կնճիռների հրաշալի նստել էր նրա նիհար ու կարճ իրանին։

Աբդիւ Համիդի ժամանակ յաճախ կարելի էր տեսնել այդպիսի երիտասարդ գնդապետներ, որոնց առանձնապէս հովանաւորում էր ինքը Սուլթանը և առանց արժանիքի պարզեատրում ու աստիճաններ տալիս։ Ռեշադի հայրը արտա-

քին գործոց նախարար էր և որ գլխաւորն է՝ սուլթանի սիրելիներից։ ահա հենց դրանով էլ պէտք է բացատրել Ռեշադի այդպէս արագ բարձր աստիճանի համար։ Դեռ քսաներկու տարեկան՝ նա սուլթանի նիզակակիրների հրամանատարն էր, իսկ քսանեհինգ տարեկան հասակում նրան Սալոնիկում մի հետեւակ գնդի հրամանատար կարգեցին։

Հին ու ծեր սպաները նախանձով էին նայում նրա վրայ։

Զահէլ է, ասում էին, հարուստ ու թերլինում կրթուած, ով կարող է նրան հասնել. ժամանակով եթէ մեծ վեզիր չէ, անպատճառ զինւորական նախարար կը դառնայ։

Փակելով իր մեծ կտպոյտ աչքերը, որ նրա միակ գեղեցկութիւնն էին կազմում, նա վերջապէս դարձաւ իր թիկնապահին։

—Ե՞ր, Մահմեդ, այս երեկոյ մենք ինչ ենք անում...

Թիկնապահը, որ սիրահարուած էր գերմանական զինուորական կարգերի վրայ, մատները փէսին մօտեցնելով պատասխանեց։

—Եփենդի, «Հարաւային Աստղ» կինեմատոգրաֆում այսօր նոր ծրագրով տրւում է «Զիգոմար» գրաման։

Ռեշադը գլխով բացասական շարժում արաւ, ատամներով գլանակը բերանի մի անկիւնից միւսը փոխելով։

—«Մարգարիտ» շանտանում այսօր հան-

դես է գալիս Ալիսա-Գրօն. լուսանկարին նայելով պէտք է ասել...

Բայց թիկնապահը չը վերջացրեց. նրա և զնդապետի մէջ բուսաւ յաղթանդամ, վայրի, գեղադէմ, զինուած մի ալբանացի: Դա Սալոնիկի գեներալ-նահանգապետ Նազիմ փաշայի դաւասն էր: Առանց զինուորական պատշաճ պատիւ տալու հպարտ ալբանացին յայտնեց նրան, որ Նազիմ փաշան անմիջապէս իր մօտ է կանչում շատ կարևոր գործով: Եւ ուղղելով գլխի փաթեթը, դաւասը լեռնցուն յատուկ թեթև քայլուածքով հեռացաւ:

—Ի՞նչ կարիճն է, քէֆս դալիս է, ասաց թիկնապահը:

—Այդ կարիճներին բոլորին էլ վաղուց պէտք էր կախաղան հանել, պատասխանեց զընդպապետը կրկնակի զայրացած: Նազիմ փաշան միանգամայն անժամանակ խանգարեց նրա քէֆը, իսկ ալբանացին իրեն չափազանց ազատ ու աններելի համարձակ պահեց նրա՝ գնդապետ Ռեշադ բէյի առաջ: Եւ վտանգաւոր է մինչև իսկ այդպիսի սրիկայի նկատողութիւն անելը. նրա համար իր տիրոջից ու փագիշահից բացի աշխարհում ոչ ոք գոյութիւն չունի: Դէպքել են եղել, երբ ալբանացի զինուորները զինուորական մարզանքների ժամանակ թեթև նկատողութիւն անող իրենց իշխանաւորներին սպանել են:

Ուսերը թօթուելով Ռեշադը յօրանջեց:

—Ի՞նչ է ուզում ինձնից այդ ծեր ազուէսը: Մահմեդ, կառք կանչիր, բայց տես որ հովանի ունենայ: Օ՞հ, ինչ դժոխային չոգ է... Գնդապետը վճարելով սրճարանի տիրոջն ու մի ոսկի նուէր տալով ծառային, զիսով հրաժեշտի ողջոյնի նշան անելով միւս սպաներին դանդաղ քայլերով հեռացաւ:

Մահմեդի զիս սուլոցին մի կառք եկաւ, որի մէջ նրանք տեղաւորուեցին:

Նահանգապետի տունը հասնելով նա թիկնապահին պատուիրեց կառքի մէջ սպասել, իսկ ինքն արագ քայլերով ներս անցաւ. դոների մօտ կանգնած զինուորները հրացանով պատիւ տալով նրան ճանապարհ տուին:

Մեծ ու հով սրահում երկու ալբանացի դաւասներ դամա էին խաղում. նրանցից մէկը մեզ ծանօթ ալբանացին էր, որ սրճարան էր եկել Ռեշադին կանչելու: Նրանք ուրուրի սուր հայեցք միայն ձգեցին գնդապետի վրայ և առանց ուշադրութիւն դարձնելու նրա վրայ, իրենց խաղն էին շարունակում:

Եւրոպայից գեռ շատ յետ ենք մնացել մենք, մտածեց Ռեշադը յիշելով Բերլինն և այստեղ տիրող մաքրութիւնն ու օրինակելի կարգապահութիւնը: Այդ ըոպէին նա վերջնականապէս ատեց այդ վայրենի ալբանացիներին: Օ՞հ, եթէ այստեղ մի ապստամբութիւն ծագէր և Ռեշադին զօրքով ուղարկէին խաղաղացնելու, նա նրանց ցոյց կը տար. ծառերը քիչ կը լինէին

կախաղանների համար, իսկ այդ աւազակների որջերը կրակի ճարակ կը դարձնէր...

Գեներալ-նահանգապետ Նազիմ փաշան հին տիպի տաճիկներին էր պատկանում. նա ատում էր եւրոպացիներին և նրանց քաղաքակրթութիւնը: Նա մեծ բաւականութեամբ ապրում էր կեղաստ բնակարանում և առանձին կարգապահութեան հետ սէր չունէր: Ամբողջ շաբաթներով անց էր կացնում կիսամերկ, միայն վերակու հագած: Նա կարմիր ու սրածայր փափուճները հագին, պառկած թախտի վրայ, դալեան քաշելով ընդունեց գնդապետին:

Ռեշադը զիտենալով Նազիմ-փաշայի ճաշակը, հենց գուան մօտից ողջունեց նրան խոնարհ ու խոր սելամով:

Գեներալ - նահանգապետի խալաթի վրայ փայլում էր աղամանդէ մի աստղ, որ սուլթանի դէպի նա ունեցած առանձին շնորհի նշան էր:

Նազիմ փաշան իր զառամեալ շրթունքներից հանելով զալեանի մուշտուկը, որ պսակում էր մանր մարգարիտների հիւսուածքով զարդարած զալեանի օձապտոյտ խողովակը, Ռեշադին մեկնեց.

— Ուզնում ես:

Ծածուկ գժկամակութեամբ մի երկու անգամ Ռեշադը զզուելով ծխեց: Այդ մի առանձին պատիւ էր, որ արաւ նրան Նազիմ-փաշան: Գեներալ-նահանգապետը քչերին էր արժանացնում այդ պատուին, թէպէտ շատերն էին ձգտում



նրան: «Բերլինում դաստիարակուածը» եթէ հնար ունենար, ուրախութեամբ կը հրաժարուէր նոյն մուշտուկից ծխելուց, որ նազիմ-փաշան էր գործածում:

— Նստիր:

Կնդապետը պէտք է նստէր շատ ցած թախտի վրայ, փաշայի կողքին, և որպէսզի ծերունուն չը վիրաւորէր, ստիպուած էր ծալապատիկ նըստել. իսկ այդ շատ ու շատ անյարմար էր Ռեշադի համար, նրա նեղ անդրավարտիկի պատճառով:

Ռեշադն անհամբեր սպասում էր, թէ ինչ է ասելու փաշան: Բայց Նազիմ փաշան չէր սիրում շտապել և անմիջապէս գործի մասին խօսել. նա այդ բանը իր արժանապատութիւնից ստոր էր համարում: Վերջերս գուրս պրծած երիտասարդներն են, որ միշտ շտապում են, կարծես թէ ժամանակ չունեն, որ ոսկու չափ թանգ են գնահատում իրենց խօսքն ու ժամանակը. հերիք չէր պոստն ու հեռագիրը, նրանք խելքներին զօր տալով հեռախօս էլ են հնարել, որ իրար հետ, առանց տեղից վեր կենալու, հարիւրաւոր վերստ հեռաւորութիւնից խօսակցեն:

Գեներալ-նահանգապետն իր ամենակարող փաղիշահի նման չէր սիրում այդպիսի նորութիւններ: Ինչու շտապել, մտածում էր նա, կեանքն ու աշխարհը չափազանց գեղեցիկ են և չարժէ արագ ապրել: Ողջը մի է, ամենքի վերջն էլ նոյնն է. շտապողինն էլ, կեանքի վայելքը

կամաց-կամաց ճաշակողինն էլ. որքան տեսական լինին հաճոյական վայելքներն, այնքան լաւ. ի՞նչ կարիք կայ հեռախօսի դիմելու, օգտուելու էղիսոնի այդ գիւտով. կարծեմ այդպէս է այն ամերիկացու անունը, որ ովկիանոսի միւս կողմը նստած խելքին զօր տալով զանազան բաներ է հնարում աշխարհը զարմացնելու համար...

||

Ի՞նչպէս է քո իմաստուն հօր, իմ երիտասարդութեան մտերիմ ընկերոջ առողջութիւնը, հարցրեց գեներալ-նահանգապետը:

—Վերջին օրերս կոստանդնուպոլիսից նամակ ստացայ, փառք Ալլահին, հայրս առողջ է և իր սրտագին ողջոյններն է ուղարկում նազիմ փաշային:

Թէ մէկը և թէ միւսը խաբում էին իրար և այնպէս էին ձեացնում, իբր թէ հաւատում են իրար. Նրանց յարաբերութիւնները երբէք լաւ չէին: Բնդիակառակը, նազիմ-փաշան, երիտասարդ ժամանակ, քիչ էր ֆում որ թունաւորէր մեշաղի հօրը, որի հաւատարմութեանը կասկածում էր սուլթանը: Իսկ որդուն գրած նամակներում հայրը երբէք բարեկ չէր միշտում նազիմ-փաշային: Մի անգամ նա գեներալ-նահանգապետին անզգուշաբար անուանել էր ծեր և խորամանկ աղուէս, բայց այդ նամակը որդու ձեռքը չը հասաւ: Սալոնիկում շատ նամակներ տեղ չէին հասնում. այդ նամակն իս միւսների

հետ միասին գեներալ-նահանգապետը յամենայն դէպս պահում էր իբրե փաստաթուղթ:

Նազիմ-փաշան քսան բոպէի չափ գանգաղ և լուրջ խօսում էր զանազան երկրորդական և փուչ բաների մասին, և երբ զնդապետին համբերութիւնից հանեց ու լաւ տանջեց, անցաւ բուն նիւթին:

—Ես ուզում եմ քեզ յանձնաբարել մի շատ լուրջ գործ. ի հարկէ ես կարող էի ընտրել ուրիշ սպայ. ամեն մէկն էլ անշուշտ կուզենար անուն հանել և աչքի ընկնել, բայց ես երբէք չեմ կարող մոռանալ, որ գու իմ հին բարեկամի որդին ես, այդ պատճառով էլ ամենահամեղ, ամենաանուշ պատառը քեզ համար եմ պահում:

Երկի թէ շատ դժուար ու չափազանց վտանգաւոր բան պէտք է լինի, մտածեց զնդապետը:

—Բացատրելու կարիք չըկայ. պարզ է թէ Ապօստոլ-Վուկովան ի՞նչ պառող է:

—Այն սրիկան, մակեդոնական սրիկաների առաջնորդը:

—Այս, հենց նա ինքը, զլիսով նշան արաւ նազիմ-փաշան. խօսք չի կարող լինել, որ նա համարձակ ու քաջ է, բայց չափից անց է կենում... Փայմագամներն ամեն օր լուր են ուղարկում, թէ այս ինչ տեղը խողխողել են այն ինչ բէզին, կախել են միւսին, հրացանազարկ են արել երրորդին... Խեղճ տաճիկ կալուածատէրերը Մակեդոնիայում օր չունեն: Իսկ այդ բոլոր սարսափների պատճառն ով է, եթէ ոչ այդ սրիկայ Ապօստոլը, որ երեակայում է, թէ

կոչուած է իր հայրենակիցների՝ ճնշուած մակեդոնացիների վրէժը լուծելու։ Լսում ես, ճընշուած... Կարծես թէ այդ շուն քրիստոնեաները վատ են ապրում Բարձր Դրան հովանու տակ։ Մեր ոյժերը ներածին չափ չենք աշխատում այդ գեաւուրների բարօրութեան համար։ Խօսքը մեր մէջ մնայ, իսկապէս մենք վաղուց պէտք է նրանց համար արեան մի լողարան պատրաստէինք, միայն աշխատաւորներից զրկուելու երկիւղն է, որ... բացի այդ՝ Եւրոպան... ի՞նչ պէտք է ասի Եւրոպան...»

Ոեշազը հասկացաւ։ Նազիմն ուզում է նրան զօրքով ուղարկել Ապոստոլ-Վոկոդին բռնելու։ Հազիւ թէ կարելի է զոհ մնալ նման բաւականութիւնից։ Ել մնաք բարով փարթամ կեանք ույարմարութիւններ։ Օրերով, գուցէ և շաբաթներով պէտք է ոտի տակ տալ անանցանելի ու անմատչելի լեռներ ու ժայռեր, առանց ճանապարհներն իմանալու, որովհետեւ նոյն իսկ կենդրոնական վարչութեան սպաներն անգամ Մակեդոնիայի կամոնաւոր քարտէսներ չունեն։ Իսկ այդ ժամանակ Ապոստոլը իր խմբով, որ այնպէս լաւ գիտէ լեռների բոլոր շատիվներն ու կածանները, ժայռերի յետեր թագնուած ամեն վայրկեան կարող է քեզ գնդակահար անել։ Եւ այդ անպիտանները բոլորն էլ զինուած են մանլիխերներով ու մառլէրներով, և նրանց գընդակն էլ գետին չի ընկնում։

— Ի՞նչպէս քո իմաստուն հօր զաւակը, դու,

կարծում եմ, ինձ հասկացար, շարունակեց նազիմ-փաշան։ Ես ուզում եմ, որ դու արժանանաս այդ բարձր զինուորական պատուին և գերի վերցնես աւազակապետին իր խմբով։ Յաջողութեան դէպքում գեներալի աստիճանն է սպասում քեզ։ Բանն այն է, որ Պոլսում լուրջ անհանգըստանում են այդ սրիկայի լրբութիւններով, իսկ նա տեղական «ռահաթի» մէջ մեծ ազդեցութիւն ունի։ Նրա մէկ խօսքը բաւական է, որ Մակեդոնիայում ապստամբութեան դրօշակ բարձրացնեն։ Բեր ինձ Ապոստոլ-Վոկոդի գլուխը, լսում ես... Ես կը հրամայեմ, որ այն զմբսեն և ինքդ սուլթանին նուէր կը տանես։ Ուղղափառների ամենակարող խալիֆայի համար այդ աւելի հաճելի կը լինի, քան եթէ աշխարհիս ամենազեղեցկուհուն նրան հարճ տան։

Նազիմը լոեց, որ վերջին խօսքերի քաղցրութիւնը ճաշակէ։ Նա կարծում էր, թէ Ոեշազը ոգեսրութիւնից կը վառուի, բայց գնդապետը նստել էր արտաքուստ հանգիստ և սպասում էր։ «Ծեր աղուէսի» աշքերը վայրկենապէս փայլեցին խորամանկ ու հազիւ նշմարուող կայծերով և անմիջապէս հանգստացան։ Առանց շտապելու Նազիմը դալեանի խողովակը տարաւ բերանը ու ծխից գեղնած բեխերի տաշկից արձակեց սատափի գոյնի ծխի թանձր քուլաները և շարունակեց։

— Զեմ ծածկում... Այդ արշաւանքը թեթև բան չէ. բայց որքան դժուար է ձեռնարկու-

թիւնը, այնքան քաղած պտուղներն աւելի քաղցը են: Ապոստոլ-Վոկողան բուն է զրել ենիշայի լճի մէջ: Մի շաբաթ կը տեի, մինչև այնտեղ հասնէք: Դու քո գումարտակներից մէկի գլուխը կանցնես: Այստեղից, Սալոնիկից, ձեզ հետ կը տանէք մինչև 50 նաւակ: Թեթևակի կը զրահաւորեն այն, մի քանիսի վրայ կը յարմարացնենք արագածիդ թնդանօթներ: Դու միաժամանակ և հետեակ կը լինես, և ծովագնաց, և թնդանօթածիդ, կատակեց գեներալ-նահանգապետը, և որովհետեւ մինչև լիճը ձիռվ կը գնաս, ուրեմն և հեծեալ ես կը լինես: Այդպէս ուրեմն վազն արել չծագած ճանապարհ կընկնես: Այլիս ուշացնել չի կարելի: Յոյս ունեմ, որ այն աւազի գլուխը հետդ կը բերես:

— Ես ամեն կերպ կաշխատեմ արդարացնել նազիմ-փաշայի վատահութիւնը, ասաց Ռեշաղը, խուսափելով դրական պատասխան տալուց:

Խորամանկ ծերունու հայեացքից ոչինչ չըթագնուեց. նա պարզ տեսաւ, որ Ռեշաղի տրամադրութիւնը փչացաւ:

«Լաւ է, լաւ, մտածեց փաշան, դու քո մեծ քիթը գեռ այստեղ ես կախում, տեսնենք թէ ինչ կանես այնտեղ, լեռներում, երբ գնդակների սուլոցը լսես»:

Ռեշաղը գուրս եկաւ. նա հազիւ կառք նստեց և հրամայեց քշել, երբ թեթև ու արագ քայլերով բակից դուրս թռաւ ալբանացի զաւասն ու կանչեց կառապանին.

— Դուր... (կաց):  
Կառապանը երասանակները քաշեց:  
— Նազիմ-փաշան պահանջում է, որ Ռեշաղը կերպ վերադառնայ...

Գնդապետը վերադարձաւ:  
— Այ թէ ինչու կանչեցի, բացատրեց գեներալ-նահանգապետը... Բոլորովին մոռացայ ասեմ, որ ամեն ջանք թափիր, որպէսզի Ապոստոլին կենդանի գերի առնես. ինքը հզօր խալիքն ուզում է զուարձանալ նրա գլխատումը տեսնելով: Օ՞հ, այդ այնպիսի տեսարան կը լինի, որ...

Ռեշաղը յիշելով իր գերմանական զինուորական մարզանքը, ուղիղ ձգուեց, պատիւ տուաւ, ուսներն իրար զարկելով, առանց իրանը թեքելու, գլխով թեթևակի նշան արաւ և գուրս գնաց:

Այս պատժող արշաւախմբի առթիւ, թեթեւամիտ պատահու նման ուրախացել էր միայն Մահմեդը:

— Ի՞նչպիսի յաղթանակով մենք Սալոնիկ կը վերադառնանք, ի՞նչ փառքով կընդունեն մեզ, երբ այն Ապոստոլ-Վոկողին՝ վիզը շան նման պարան ձգած, շղթայակապ հետներս բերենք...

Ռեշաղը ոչինչ չը պատասխանեց:  
ի՞նչ խօսք, որ առաւօտը ճանապարհ ընկնելու մասին մտածել անգամ չէր կարելի: Մի շաբաթ անցաւ, մինչև հարկաւոր թուով նաւակ.

Ներ ժողովեցին։ Նազիմ-փաշան զինուորական դրութեան օրէնքով հրամայեց ժողովել բոլոր նաւակները։

—Արշաւանքից յետոյ կը վերագարձնենք, ասում էին ժանդարմները. իսկ եթէ փշանան, տէրերն օսմանեան կառավարութիւնից իրենց նաւերի արժէքը լիովին կըստանան։

Նաւատէրերն իրենց ծոծրակն էին քորում, ատամները կրծտացնում. նրանք իրենց անձնական փորձով լաւ գիտէին, թէ ինչպէս է վճարում օսմանեան պետութիւնը, բայց ինչ կարող էին անել։

Արագածիդ թնդանօթներ թէպէտ ճարուեցին, բայց պատերազմական գնդակներ չըկային։

—Ոչինչ, մխիթարում էին իրար սպաները, առանց գնդակների ևս գործը զլուխ կը գայ, միայն թէ այդ լիրը մակեդոնացիներին մի վախեցնենք, մեր ասկեարները բոլորին էլ մէկ-մէկ հրացանազարկ կանեն։ Վերջապէս գումարտակն արշաւանքի ելաւ։ Առաջից տաճկական փոքրիկ ձիերի վրայ գնում էին Ռեշտ-բէյն ու Մահմեդը, նրանց հետեւում էին պահեստի զինուորներով ամբողջացրած չորս վաշտ, ինչպէս լինում է պատերազմի ժամանակ, իսկ ետեից երկու վերստ տարածութիւն բռնել էին նաւակները, ուազմամթերը, արագածիդ թնդանօթներն ու պաշարի սայլերը, Երկարականջ ջորիները, լեռնային ձիերն ու գոմէշները դանդաղ քաշ էին տալիս ծանր բեռնած ճռճուցող սայլերը։

### III

Ենիջայի լիճը ծածկուած էր խիտ բուսած եղեգնով։ Այդ ճկուն, նոյնիսկ խաղաղ եղանակին մշտատե երգող եղեգնուտը կարծես խիտ անսառ լինէր։ Ահագին լիճը ձգուել էր միծամեծ սարերի մէջ. եթէ այդ եղեգնուտը չը լինէր, այնտեղ կարող էին շոգենաւեր բանել։ Այդ ըստ երևոյթին թոյլ պատնէշը արգելք էր հանգիսանում ամեն տեսակի նաւերի երթեւեկութեան, իսկ եթէ որևէ սրածայր նեղ նաւակի յաջողուում էր ներս թափանցել այդ խորհրդաւոր եղեգնուտի ներսը, նա այնտեղ մոլորում էր ու չէր կարողանում գուրս գալ…

Ճիշտ է, մի քանի նեղ նեղուցներ կային, ուր երկու նաւակ ազատ շարժուել չէին կարող, բայց այդ նեղուցները յայտնի էին միայն Ապոստոլ-Վուկողին ու նրա խմբին։ Ենիջայի լճի մէջ տեղը հինգ-վեց մանր կղղիներ կային։ Նրանք մի խումբ էին կազմում։ Նրանք արտաքին աշխարհից պաշտպանուած էին լաւ աճած եղեգնուտով, որ մարդու հասակի երկու ու կէս բարձրութիւն ունէր։

Անմատչելի էր քաջ խմբի ապաստարանը… Ազատ թոշունների նման նրանք ապրում էին իրենց գետնափոր խրճիթներում ու դագաներում։

Ապոստոլ-Վուկողան լսելով, որ իր գլուխը

թուրքերը 10 հազար մանէթ են գնահատել,  
ծիծաղում էր:

— Թող մի փորձեն քիթները ցոյց տան,  
տես թէ իրանք առաջ քանի զլուխ կը կորցնեն:

Պատմութեան նիւթ զարձած ճորտութիւնը  
ոչինչ էր, համեմատած այն զրկանքների հետ,  
որ մակեդոնացի քրիստոնեաները կրում էին  
տաճիկ կալուածատէրերից կամ բէգերից: Ամեն  
ինչ բէգերին էր պատկանում — վարելահողը,  
արօտատեղիները, ձկնորսութեան իրաւունքը,  
զիւղերն ու ընակարանները, մի խօսքով ամեն  
ինչ: Եթէ հասր լինէր, բէգերը օդն էլ կը սեփա-  
կանացնէին: Վայն եկել տարել է, եթէ «ույան»  
բէգին զայրացնի: Բէգի իրաւունքը ոչնչով չի  
սահմանափակւում: Նա կարող է մակեդոնացուն  
նրա ընտանիքով զիւղից դուրս քշել, նրան շան  
նման զնդակահար անել, կախել կամ թէ տաճիկ  
ժանդարմների ձեռքը տալ չարաչար տանջելու:

Բէգի համար ոչ օրէնք կար, ոչ դատաս-  
տան: Եթէ թշուառ գիւղացիները երբեմն դի-  
մում էին բարձր իշխանութեան արդարութիւն  
ինդելու, կառավարութիւնը բողոքող գիւղը  
ժանդարմներ էր ուղարկում, որոնք բէգի ցուց-  
ամունքներով ձերբակալում էին ըմբոստ զիւղա-  
ցիներին և սարսափելի տանջանքների մատնում:  
Տղամարկանց հաշմանդամ անելուց յետոյ, նրանց  
քիթ ու ականջները կտրատում էին, աչքերը  
հանում, յետոյ էլ սպանում: Նոյնն անում էին  
և կանանց, այն զանազանութեամբ, որ նախ

գազանաբար իրենց անասնական կրքերին էին  
յագուրդ տալիս, նրանց պատիւն ու մաքրու-  
թիւնն արատաւորելով...

Մարմնով ու հոգով աւելի զօրեղ մակեդո-  
նացիները, որոնց ոյժերից վեր էր տանել այդ  
տաժանակիր կեանքը, սարերն էլն փախչում,  
խմբեր կազմում և հայրենիքի բոնակալներից  
վրէժ առնում: Ամբողջ Մակեդոնիան ծածկուած  
էր այդպիսի ազստամբ խմբերով: Այդ կարիճ-  
ները, որ էլ կորցնելու բան չունէին, ժողովողի  
համակրանքն էին վայելում ու ասեն տեղ ա-  
պաստանաբան գտնում: Նրանք զինուած էին  
երեք-գծանի արագածիդ հրացաններով, իսկ տե-  
ղական լեռներն իրենց հինգ մատների նման  
գիտէին: Թշնամիների դէմ ահեղ ոյժ էին նրանք:  
Քիչ չէր պատահում, որ նրանք ընդհարուէին  
տաճիկ պատժիչ զօրախմբերի հետ, այդ դէպ-  
քում տեղի էր ունենում կատարեալ պատե-  
րազմ, որից մակեդոնացիները համարեա թէ  
միշտ յաղթող էին դուրս գալիս: Պատահում էր,  
որ թշնամու թուական անհամեմատ առաւելու-  
թիւնից ընկճուած՝ խմբերը ոչնչանում էին մին-  
չև վերջին մարզը զոնելով: Բայց այդ չէր վա-  
խեցնում մակեդոնացիներին: Անձրեից յետոյ  
երեացող սունկերի նման աճում էին անողորմ  
վրէժինդիրների նորանոր խմբերը:

Ամենասարսափելի ու զօրեղ խումբը  
Ապստալ-Վոկողի խումբն էր: Նրա անդամների  
թիւը հասնում էր ութսունի, որոնք կուրօրէն

ու անձնուիրութեամբ հպատակւում էին իրենց խմբապետին:

Ապոստոլ-Վոկողան այնպէս էր զինել իր խումբը, որ բոլորի զարմանքն էր շարժում:

«Փախստականներն» ամեն կողմից նրա մօտ էին գալիս, ժողովւում այդ առասպելական խմբապետի շուրջը, որին Մակեդոնիան անւանում էր «Վարդարի Արև»: Գալիս էին ամեն կողմից, բայց Ապոստոլը նրանց մերժում էր. — Ութսունն էլ ներիք է, ասում էր նա. դրանից աւելին կառավարելը դժուար է: Ես ճանաչում եմ իմ զինուորներին և հաւատում եմ նրանց, ինչպէս ինքս ինձ...

Ապոստոլի խումբը «անմահ» էր կոչւում: Ութսուն թիւը միշտ պահուում էր անփոփոխ. կոիւներում սպանուածների փոխարէն ընդունում էր նոր զինուոր, իսկ ինքն Ապոստոլը ութսունումէկերորդն էր:

Թէ ով էր Ապոստոլը — ոչ ոք հաստատ չը գիտէր: Ոմանց ասելով նա ծագումով մակեդոնացի էր և Պոլսում, հոգեոր սեմինարիայում սովորելիս, մէկ անգամ օրը ցերեկով փողոցում սպանում է մի տաճիկի, որը վիրաւորել էր մի հայ կնոջ. այդ օրուանից նա ստիպուած սարերն է ընկել: Միւսների ասելով «Վարդարի Արևը» ոչ միայն մակեդոնացի չէ, այլ և բարկանեան սլաւոն, այլ նախկին ոռուս սպայ, գըլխից ձեռք վերցրած մի կտրիճ, որ փոթորկալի կեանք էր փնտրում: Ուրիշները որևէ առաս-

պելական պատմութեան հետ էին կապում նրա ծագումը, և այլն:

Վոկողան երեսուն և երկու տարեկան մի երիտասարդ էր, որ ոչ այնքան կրթուած մարդու, որքան շատ ալլրած ու շատ բան տեսած մի անձնաւորութեան տպաւորութիւն էր թողնում: Ազատ խօսում էր բուլղարերէն, սերբերէն, յունարէն, տաճկերէն ու ոռուսերէն. և թէպէտ գժուարութեամբ, բայց այնուամենայնիւ խօսում էր նաև գերմաններէն ու ֆրանսերէն:

Երբեմն լուր էր հասնում, թէ Սալոնիկի վիլայէթում կամ մի այլ տեղ բէզը կամ թէ երկրի կառավարիչը՝ գայմագամը առանձնապէս ձնշում է քրիստոնեայ գիւղացիներին, կամ գիւղն աւերել են, գիւղացիներին դուրս քշել. մի այլ տեղ, թէ փակել են եկեղեցին ու քահանային մերձիմահ ծեծել, իսկոյն վրայ էր հասնում Ապոստոլ-Վոկողան: Սկսւում էր սարսափելի դատաստանն ու հատուցումը: Գայմագամներն ու բէզերը ծառերից կախուած ձօձւում էին, նրանց տունը կրակի ճարակ էր դառնում, իսկ գոյքն ու զըամը կողոպտում, մասամբ չունեոր գիւղացիներին էր բաժանում, մասամբ տանում էին Ենիջայի թագատատեղերը և գործագրւում էր խմբի պահպանութեամն, կամ զէնք ու ուազմամթերք գնելու համար: Ապոստոլը երազում էր Աւստրիայից մի քանի գնդացիրներ (պուլեմեօտ) բերել տալ:

Ապոստոլի այդ արիւնուշշարշաւանքները

զուր չէր, որ անհանգստացնում էր Պոլիսը: Այդպիսի մի անձնաւորութիւն հեշտութեամբ կարող է ապստամբութեան հրդեհ առաջացնել ողջ Մակեդոնիայում: Դէս այն ժամանակ եկ ու հանգստացրու: Աւելի լաւ է դրա առաջն առնել և կրակը իր բնում խեղդել:

Ահա այդ էր պատճառը, որ Սալոմիկի գեներալ-նահանգապետ Նազիմ-փաշան կոստանդնուպոլսից հրաման էր ստացել որևէ զինուորականի հրամանատարութեամբ ենիջայի լիճն ուղարկել մի ամբողջ գումարտակ արագածիդ թնդանօթներով:

IV

— Ուր է այն յոյնը, ինչպէս էր անհենը, Աքիլլէս Զաննօծ: Զը գիտես, Ղուլի:

— Խմբապետ, երկրորդ օրն է, որ չի ենառում...

— Տարօրինակ է... Փախել է իհարկէ. գիտես, հենց առաջին անգամից նա ինձ դիւր չեկաւ: Զափից աւելի յունական քնքութիւն ունէր, մէջը ցուցամոլութիւն կար և խորամանկ ու կեղծաւոր հայեացը ունէր: Նա բոլորովին Աքիլլէս Զաննօծն էլ չէր...

— Թէկուզ հենց այդպէս էլ լինի. Թէկուզ նա ուրիշի անունով էլ եկած լինէր. մենք հօաւստրիացիներ չենք, որ մեր հայդուկներից անցագիր պահանջենք...

Խմբապետը խոժուելով գէմքը ձեռքը թափ տուեց:

— Ինձ չես հասկանում, Ղուլիկ: Բանն այդ չէ, այլ այն, որ... Բայց, Տէր Աստուած, միթէ կասկածել կարելի՞ է, որ այդ յոյնը թուրքերից ուղարկուած մի մատնիչ էր:

— Խմբապետ, դու ինքդ ընդունեցիր նրան:

— Այն, ես ինքս, բայց մեզնից ով յիմարութիւն չի գործում: Խմբապետը յիշեց, թէ ինչպէս մէկ ամիս առաջ Տիկւիչ լեռնազիւղում, որտեղ նա իր խմբով խստասիրտ բռնակալ բէկի գատն էր տեսնում, Աստուած գիտէ թէ որտեղից նրա մօտ եկաւ քաղաքացու զգեստով մի երիտասարդ յոյն, ծնկաչու գետին ընկաւ ու արտասուրքն աչքերին աղաղակում էր, որ իրեն խմբի մէջ ընդունեն...

Ահա այդ Աքիլլէս Զաննօծն այժմ անյայտացել էր, և այդ Ապոստոլ խմբապետի ու նրա աջ թէ Պետո Գուլիսկոյի խօսակցութեան նիւթդառել:

Նրանք ծալապատիկ նստել էին ծառի տակ և ծխում էին իրենց մակեդոնական կարձ չիրուխները: Նստած էին հենց լճի եզերքին: Ամառնային տաք օրին ջրից բարձրանում էր փտած ջրաբոյսերի գոլորշին: Փոքրիկ նաւակի վրայ սաւառնում էին թափանցիկ թեաւոր ծղրիաները: Ափից մի քսան քայլի վրայ խշում էր եղեգնուար: Այդ խիտ եղեգնուառում, տեղատեղ

բացւում էին նեղ շաւիդներ, ուր հազիւ միայն կարող էր սողալ նեղ մակոյկը:

Ապոստոլն ու Ղուլիեն ապրում էին կղզիներից ամենից փոքրի վրայ: Երեք բռպէում կարելի էր պտտել նրա շուրջը: Ոչխարի մորթով պատած երկու փոքրիկ վրաններից մէկի մէջ ապրում էր Ղուլիեն, իսկ միւսի մէջ տեղաւորուել էր խմբապետը իր կեանքի ընկեր, նոյնպէս խմբի անդամ, ֆանկա Սեմիգովայի հետ:

Հակառակ տիպի մարդիկ էին խմբապետն ու Պետօն: Առաջինը միշտ դժգոյն, մտածկոտ փոքրահասակ, ճարպիկ և ուժեղ էր, կարծէք թէ ամբողջապէս պղնձից էր ձուլուած. նա իր ոյժով կարող էր մրցել ամենաուժեղ ըմբիշի հետ անգամ, իսկ Պետօն ընդհակառակը միշտ զուարթ էր և թարմ դէմքով. կանոնաւոր ու դեղեցիկ դէմքի վրայ փայլում էին մի զոյգ մեծ ու թափանցիկ աչքեր, որ նրա թոյլ բնաւորութեան արտայայտիչներն էին: Իր անսահման քաջութեան ու համարձակութեան հետ միասին, նա միանգամայն զուրկ էր սեփական կամքի ոյժից... Եւ եթէ Ապոստոլը չը լինէր, նա վաղուց կորցրած կը լինէր իր տաք գլուխը: Այդ զուարձասէր ու կնամոր, լայնաթիկունք աժդահան աւելի ահոելի տպաւորութիւն էր թողնում իր հայդուկային զգեստով ու փամփուշտակալներով: Գլխին դնում էր ոչխարի մորթուց մի փափախ, որի վրայ խաչաձև արծաթէ երկու արմունկի

ոսկըների վրայ փայլում էր ժպտացող մի գանգ, այդ յեղափոխական խմբերից մէկի նշանն էր, որին և պատկանում էր Ղուլիեր: Նրանց մօտ դրուած էին մանլիխերի տեսակի երկու արագածիդ հրացան, որով մի տարի առաջ զինուել էր աւստրիական հեծելազօրքը:

Զիբուխը քաշելով, Պետօն բերանի անկիւնից թքեց:

— Խմբապետ, տես, որ վերջը վատ չը լինի...  
— Ինչո՞ւ:

— Հենց այդ բերգէնը...

— Այդ էր մնացել, Պետօն. ուզում ես ապացուցեմ, որ ամեննեին վտանգ չի կարող լինել, թէկուզ այդ անզգամը լրտեսների լրտեսն անգամ լինի. Էնչ ես կարծում, տաճիկները մեր ապաստարանի տեղը գիտեն:

— Գիտեն:

— Հետեապէս լիրը Զաննօն նրանց մի նոր բան չի ասելու: Նրանք մօտաւորապէս զիտեն և մեր ոյժն ու կոռոի պաշարը և վաղ թէ ուշ նրանք պէտք է շրջապատեն մեզ ու աշխատեն մեզ տիրել: Եթէ այդպէս է, աւելի լաւ է, որ այդ շուտ կատարուի, քան թէ ուշ: Մեր ապաստարանը փոխել չենք կարող. ամրող Մակեդոնիայում այսպէս յարմար տեղ չես գտնի: Վերջապէս թքած Զաննոյի ու նրա դաւազրութեան վրայ. ուրիշ բան էր, եթէ նա կարողանար մի գերբնական ոյժով մեզ շրջապատող այս եղեգնուտը ոչնչացնել, այն ժամանակ ճիշտ որ կա-

ըող էր վտանգաւոր լինել. իսկ այսպէս... Խմբապետի դէմքով մի արհամարհական ժպիտ անցաւ:

Պետօն թափահարեց գլուխը:

— Խմբապետ, իսկապէս որ դու միշտ ուղիղ ես մտածում. ամեն ինչ քեզ համար պարզ է և այդպէս լաւ կարողանում ես բացատրել: Սատանան տանի. այ լաւ կը լինէր, տաճիկնեներին մի դաս տայինք հա... Թող մի դան...

Խմբապետը մտազբաղ հայեացքը հեռուն ձգեց:

— Այժմ, երբ յոյնը փախել էր, ամեն օր պէտք էր սպասել նրանց գալուն... Բնդունելութիւնից գոհ կը մնան...

Վախեցած թռչունների երամի նման, յանկարծ խշշալով տատանուեց եղեգը. խմբապետն ու Պետօն իսկոյն հրացանները առան... Եղեգնուտի միջից երևաց մի մակոյկ. կանգնած թիվալրում էր խմբի ամենածեր անդամը՝ Տոդորովը, որը թէպէտ վաղուց էր թևակոխել եօթներորդ տանեակը, բայց իր առոյգութեամբ և ոյժով ամենաերիտասարդից անդամ յետ չէր մնում: Այս մարդը գիտէր Մակեդոնիայի բոլոր շաւիդներն ու ապաստարանները:

Տոդորովը հեռուից ժպտալով բացեց իր տատաններից զուրկ բերանը. ծերութիւնից չէր, որ թափուել էին նրա տատանները. դեռ ազատարար կռուին էր, որ տաճկի հրացանի կոթը զրկեց նրան առաջին տատաններից, երբ նա կը ու-

ւում էր բուլղարների կամաւորների շարքում:

Մակեդոնական այդ պառաւ գայլը չէր ուղում ընկճուել ծերութեան հասակում անգամ: Միշտ թափառում էր շրջակայքում, տեղեկութիւններ ժողովում. գալիս էր, էլի անյայտանում ու ամեն անգամ մի նորութիւն կը բերէր հետր: Այ հենց այժմ էլ դեռ նաւը ափ չը հանած ու լեռնցու արագ ու ճարպիկ թռիչքով ափ չելած, յայտնեց.

— Խմբապետ, տաճիկները մօտենում են ափին:

— Տեսնում ես, Պետօ, աւելի լաւ է այժմ, քան թէ ուշ, իսպաղ դարձաւ Վարդարի Արկը Ղուլիկին. ապա հարցըրեց Տոդորովին՝ հրքան են նրանք:

— Հազար կը լինեն... Նիզամ, նաւակներ էլ ունեն, մանր թնդանօթներ էլ են բերում...

— Պառաւ աղուէսն ամեն պատրաստութիւն տեսել է, ասաց Պետօն:

— Դէհ, տեսնենք, Ապնստոլ, արտասանեց խմբապետն ու ոտքի թռաւ. թուրքերը գալիս են գլուխդ տանելու...

V

Ուշադի հրամանատարութեամբ մի շաբաթից աւելի ճանապարհ էր զնում այդ պատժող արշաւախումբը Սալոնիկից մինչեւ Եսիջայի լիձը: Կարելի էր աւելի շուտ էլ հասնել, բայց ուշա-

նալու պլատմառը եղներն էին, որ այնպէս դանդաղ էին շարժում: Հաւատարիմ մնալով իր թերլինի սովորութիւններին, Ռեշաղը մինչև իսկ մակեդոնական լեռներում շրջապատել էր իրեն առանձնայատուկ յարմարութիւններով: Նա ամեն օր ածիլում էր, և հետեւլով գերմանական զինուորականներից մէկին՝ իր հետ գուտապերչի վաննա էր տանում: Առանձին սայլակով զանազան կոնսերւներ, ուտելեղէններ և խմիչքներ էր տանում. զնդապետը իր սիրելի թիկնապահի հետ համեղ ուտում ու խմում էր. իսկ ծեր սպաներն ու զինուորականները բաւականանում էին հացով ու պանրով, զովացնելով իրենց ծարաւը տկճորից քամած ինչոր թթու հեղուկով:

Ահա և արշաւախմբի նպատակակէտը: Մըռուայլ ու մերկ ժայռերի մէջ ձգւում է լիճը: Խիտ եղեգնուուր սկսում էր ափից մի 500 քայլ հեռու: Այստեղ Ռեշաղն զգաց իր կատարեալ անզօրութիւնը: Ինքն արշաւախմբի առաջնորդ լինելով՝ չէր իմանում թէ ինչպէս սկսի պաշարումը և ինչից սկսի: Ամբողջ գումարտակը պատրաստ էր հրացանը ձեռքին, իսկ սայլերի պոչը դեռ լեռներից ցած չէր իջել: Սկսուեց ամառնային լեռնային անձրեր և իր խոշոր կաթիլներով ամեն ինչ թրջեց:

—Այդ էր պակաս, փնթփնթաց ոսկով պատած ատամների միջից զնդապետը: Նա բոլոր սպաներին զինուորական խորհուրդի կանչեց: Ռեշաղը ստիպում էր, որ բոլորը հերթով իրենց

կարծիքը յայտնեն: Ամենից առաջ դուրս պըրծաւ նրա թիկնապահը:

—Իսկ եթէ ամենից առաջ նաւակով մի քանի զինուոր ուղարկենք և առաջարկենք, որ անձնատուր լինեն:

Արհամարհանքով Մահմեդին նայեց Մուստաֆա-էդղինը, որ սպաներից ամենից ծերն էր ու փորձուածը:

—Այդ զինուորները յետ չեն դառնայ, ամենալաւ դէպքում նրանք կը մոլորւեն եղեգնուուր, բայց և կարող է պատահել, որ հայդուկները նրանց գլուխը կտրեն:

Թիկնապահը շփոթուեց:

—Իսկ դուք ի՞նչ խորհուրդ կը տաք, Մուստաֆա-էդղին, հարցրեց Ռեշաղը:

—Իմ կարծիքով, ինչպէս հարկն է պէտք է պաշարել լիճը. նաւակները ջուրն իջեցնել և զինուորներով առաջ շարժուել, աստիճանաբար նեղացնելով պաշարող օղակը: Եղեգը կտրատելով քայլ առ քայլ առաջ կը զնանք:

—Ի՞նչքան ժամանակ կը հարկաւորուի դրա համար:

—Երկու օր, գուցէ և աւելի:

Ռեշաղը խոժոուեց դէմքը. նա երբէք չէր կարծում, որ այդքան երկար կը տեի և այդպէս դժուար կը լինի:

Մինչև երեկոյ նրանք հազիւ կարողացան նաւակները ցած բերել: Անձրել զադարեց, բայց ամեն ինչ թրջուել էր. խոնաւ էր և ցուրտ: Փա-

թաթուած իր անթափանց վերարկուի մէջ նա  
նստել էր վրանում ու կոնեակով ջերմացնում  
էր իր սառած մարմինը: Գիշերային արշաւանքի  
մասին մտածելն անդամ աւելորդ էր: Վճռեցին  
առաւօտն սկսել: Խարոյկները վառեցին...

Մուստաֆա-Էդղինի խորհրդով արշաւախըմ-  
բի մէջ եղած քառասուն զինուորի ձի տուին,  
որոնք միւս զինուորների հետ միասին մէջընդ-  
մէջ պէտք է շրջէին լճի եզերքին հսկելու, որ-  
պէսզի հայդուկների խումբը կղզիներից փախ-  
չելու գէպքում բանակին իմաց տային:

Գիշերուայ մօտ լիճը ծածկուեց անթափանց,  
թանձր մառախուզով: Խարոյկների դողով բոցը  
մեղմ շողեր էր արձակում ու աղօտ լուսաւո-  
րում էր զինուորների գժգոյն գէմքերը: Կաթ-  
սաներում շորուայ էին եփում: Երկար ու դը-  
ժուարանց ճանապարհից յոզնած ու սոված աս-  
կեարներն ականջները սրած լսում էին եփուող  
կերակուրի խլպլտոցը, և անհամբեր սպասում,  
թէ նրբ պատրաստ կը լինի կերակուրը: Ոմանք  
բեկ-բեկ ու մելամաղձոս ձայնով երգում էին,  
իսկ միւսները խօսում էին, և գիշերուայ խոր-  
հըրդաւոր լուսութեան մէջ նրանց ձայնը մի տա-  
րօրինակ հնչիւն ունէր:

Անթափանց մառախուզով պատել էր ամեն  
ինչ: Լիճ ու երկինք ձուլուել էին թանձր մշուշի  
քուաներում և այդ անթափանց մթութեան մէջ  
վխտում էին անտեսանելի թշնամի մարդիկ...

Նիհար ու ոսկրոտ անատոլիացի զինուորը,

որի միայն կաշին ու ոսկորն էին մնացել, պինդ  
ատամներով չորացած հացի կտորը կրծելով  
ասում էր ընկերներին.

— Ես լսել եմ, որ այդ Ապոստոլը ՀՀթանի  
հետ բարեկամ է, նա մեր հրացաններից իսկի  
էլ չի վախենում... Դուք կարծում էք թէ նա  
կը սպասի՞ մինչև մենք վրայ տանք. Էս թուխպն  
էլ նրա գործն է, որ մեր աչքերը կապի ու ինքն  
անցնի գնայ, ուր որ ուզում է:

Զիլ կերպով իրար ձայն էին տալիս մշուշի  
մէջ կորած պահապանները: Սպայ Մուստաֆա-  
Էդղինը ամբողջ գիշեր աչքը չէր փակել: Նա  
մինչև իսկ թեր չէր ընկել: Նրա հսկողութեամբ  
զինուորները սայլերից իջեցնում էին զինուորա-  
կան հասարակ ու զբունելու նաւակներ, որոնց  
քիթն ու կողերը հապճեալ զրահաւորուած էին  
երկաթէ, մինչև իսկ հասարակ թիթեղի կտոր-  
ներով:

Առաւօտեան գէմ ամեն ինչ պատրաստ էր  
առաջ լողալու համար: Ռեշադի համար պատ-  
րաստուած էր առանձին շոգենաւակ, որ ունէր  
մի փոքրիկ, բայց շքեղ նաւասենեակ: Գնդապե-  
տին ուղեկցում էին նրա թիկնապահն ու գըն-  
դից ընտրած 10 ամենալաւ հրացանակիրներ: Յոզնած,  
անքուն աչքերով — ամբողջ գիշեր  
յուզմունքն ու երկիւղը փախցրել էին նրանից  
քունը — նա մի գժգոհ հայեացք ձգեց իր շուրջը  
գտնուած նաւատորմիղի վրայ:

—Ապա ուր են արագածիդ թնդանօթները, ինչու նաւերի վրայ չեն:

—Նրանք անօգուտ են, էֆենդի, պատասխանեց Մուստաֆա-էդդինը: Մենք սխալ ենք գործել, որ ոչ մի թնդանօթաձիդ չենք վերցրել մեզ հետ:

—Ինչպէս թէ:

Ծեր սպան թևերը լայն բացեց ինշան անգորութեան:

Ռեշադը կատաղութիւնից ֆէսը գետին զարկեց ու սկսեց կոխկոտել:

—Թող էֆենդին չը ցաւի, զգուշութեամբ նկատեց Մուստաֆա-էդդինը. այստեղ թնդանօթի կրակը՝ միենոյն է՝ անօգուտ է, ու միտք չունի...

Սայլերի պահպանութեան և եզերքը պաշտպանելու համար 80-ի չափ զինուորներ թողին: Յիսուն նաւակ ամեն կողմից առաջ արշաւեցին: Սկզբում այդ հեշտ էր. բայց քիչ յետոյ նրանց ճանապարհը կապեց ճկուն, բայց միենոյն ժամանակ անմատչելի եղեգնի պարիսպ, որ ամեն մի քայլին ստիպուած էին զօրով տիրանալ. Նրանք երկսայրի սլիմներով, կացիններով ու թրերով կտրատում էին եղեգը՝ իրենց համար ճանապարհ բանալու նպատակով:

Ռեշադը երկիւղ կրելով իր թանկագին կեանքը վտանգի մատնելուց, նաւասենեակից դուրս չէր գալիս: Նա նզովում էր իր կեանքն ու զինուորական ասպարէզը, և ափսոսում, որ

դիպլոմատ չէր դառել: Այդ աւելի լաւ կը լինէր ու անվտանգ, և երկիւղը փարատելու համար նա զօր էր տալիս կոնեակին:

Այսպէս կրեայի քայլերով շարժուելով նաւատորմը մինչև երեկոյ առաջ էր գնում: Պաշարման օղակը քանի գնում սեղմւում էր և եթէ այդպէս կարողանային առաջ շարժուել, հետեւեալ օրը հնարաւորութիւն կունենային գնդակահար անելու Ապոստոլ-Վոկոդի ու նրա խմբի ապաստարանը:

Երեկոյեան մթնաշաղին մակեդոնական հայդուկները առաջին նշանը տուեցին. ու կարծէք թէ ձիերի արոփիւնից փայտէ կամուրջ էր դղրդում: Այդ նրանց համագարկերն էին, որ այնպէս յաճախակի լուռում էին մօտիկում: Աներենոյթ հայդուկների անակընկալ գնդակները մահացու հարուածներ էին տեղում տաճիկ զինուորների վրայ: Նրանք զարկուած ընկնում էին նաւակի մէջ: Մասները հրամայում էին համազարկերով պատասխանել, բայց այդ զարկերը գրեթէ անօգուտ էին անցնում, կոտորելով միայն եղեգնի ճկուն ցօղունը:

Մուստաֆա-էդդինը իր ծանր նաւով հազիւ հազ հասաւ Ռեշադի շոգենաւակին: Մեծ դժուարութեամբ նա Ռեշադին դուրս կանչեց, որ կուչումուշ անելով հազիւ գուրս եկաւ:

—Էֆենդի, ես ուզում եմ ձեր հրամանը լսել... Մենք շատ մարդ ենք կորցնում. շարժում են առանց ճանապարհ տեսնելու, հա-

մարեա թէ պատահական կերպով։ Այդ սատանաները, որ եղեգնուածի բոլոր ծակ ու ծուկը գիտեն, մօտենում են և հրացանի են բռնում մեզ։ Այդ աւազակների աչքերը կատուի աչքերի նման լոյս են տալիս։ Նրանք այնպէս են տեսնում զիշերով, ինչպէս ցերեկը։ Հուսէյն Ալին ևս ծանր վիրաւորուել է կրծքից։

— Յետ նահանջել, դողդոջ ձայնով ասաց գնդապեար։ Նահանջել և առաւօտը նորից յարձակման պատրաստուել... .

Ամբողջ մի ժամ անցաւ, մինչև գնդապետի հրամանը ամբողջ նաւատորմին հասաւ։ Մինչ այդ, տաճիկներից շատ մարդ էր պակասել։ Սպաներն ևս կորուստ էին տուել։ Անտեսանելի թշնամին զարան մտած եղեգնուածում գնդակի կարկուտով սարստիելի մահ էր տարածում... Հայդուկների հրացանները դադարեցին որոտալ միայն այն ժամանակ, երբ տաճիկները նահանջելով նորից ափ ելան։ Սպանուածների թիւը հասնում էր վաթսունի։ Նրանց շարքով պառկեցըն ափին և ծածկեցին վերաբերուներով։ Բժիշկը իր երկու օգնականների հետ սկսեց վիրաւորուածների վերքերը կապել։

Մեշագը զիշերեց իր շոգենաւակում։ Նա լաւ էր պրծել, նրա նաւաստիներից ու զինուորներից ոչ մէկի մազին անգամ չէին դիպել։

VI

— Ի՞նչ ասացիր, խմբապետ, հարցրեց մի կանացի ձայն։

Գետնափորից մի առանձին թեթև շարժուածքով դուրս թռաւ տղամարդու հազուստով մի օրիորդ, որի գեղեցիկ գլուխը պսակուած էր երկու սկ փաթթամ ու ձկուն հիւսերով։ Գլխին երել էր մակեդոնացու փափախ, իսկ պինդ դըել էր մակեդոնացու փափախ, իսկ պինդ կուրծքն ու ձկուն իրանը գրկել էին փամփուշտակալները։

Նա բարձրահասակ էր, բարեկազմ և ուժեղ։ Ֆանկա Սեմեգովան էր նա։

— Ի՞նչ ասացիր, կրկնեց նա մօտենալով զուարթ ու փայլելով իր սկ ու կըակոտ աշերով և թուխ դէմքով։

— Այ թէ ինչ։ Անգելը մեզ լուր բերաւ, որ հազարից աւել զինուորներ են եկել նաւակներով, սպասում են ափին և ուզում են մեզ եղեգնուածից դուրս քշել։

Տողորովը իր սետցած ջլոտ թեթրով յենուած թիին՝ անատամ բաց բերանով այնպէս էր ժապում ու զլխով համաձայնութեան նշան անում, կարծէք թէ մի չափազանց ուրախ լուր էր բերել։ Նա շարունակեց։

— Նրանց պէտք է յիմարացնել. մեր գաղտագողի ձանապարհներն ու պահեստի տեղերը

ոչ ոք չը գիտէ: Վախենալու բան չը կայ: Թիշերով ես ամբողջ խումբը դուրս կը բերեմ, հենց նրանց քթի տակով կանցնենք ու հայդէ դէպի սարերը: Ել թող նրանք մեզ որտեղ կուցրել են, էնտեղ էլ փնտրեն: Ես այդպէս եմ ասում, խմբապեմ:

Ապոստոլը հայեացքը փոխանակելով ֆանկայի ու Ղուլիկի հետ, գլխով բացասական նըշան արաւ:

—Զէ, ծերուկ, այդ չեղաւ. այդ մեզ պատիւ չի բերի, և յաղթանակը թուրքերին տուած կը լինենք: Այդ չափազանց մեծ պատիւ կը լինի նրանց համար. պէտք է մի փոքր չարչարենք, մի քիչ նրանց արիւնը քամենք: Մեր կղզիները հեշտութեամբ ձեռքից չենք տալ: Այ թէ ինչ. այսօր նրանք կը դիշերեն, և միայն վաղը երեկոյ հազիւ եղեգնուտի մէջ մտնեն, և ահա հենց այդ ժամանակ կըսկսուի մեր իսկական գործը:

—Իմ էլ, վրայ բերեց ֆանկան:

—Մեր հոգէառների վրայ մենք կարող ենք սուրալ ամենախիտ եղեգնուտում անգամ ու կըսկսենք կրակել այդ կենդանի խրտուիլակներին. ամեն մի համազարկից յետոյ բոլորս կը պառկենք նաւի յատակում, նրանից յետոյ թող թուրքերը կրակեն մեզ. նրանց գնդակները մեր գլխով կանցնեն հեռուն:

—Պարզ բան է, հաւանութեան նշան տուեց Պետօն. նրանց մտքովն էլ չի անցնի ցած կրա-

կել: Զինուորը միշտ ջրին գուգահեռական է զարկում:

— Տեսնում էք... Ուրեմն մենք մեզ առանձնապէս վտանգի չենք ենթարկում. կամ կարող ենք շատ քիչ տուժել, այն ինչ մի քանի տասնեակ այդ շուն թուրքերից Մահմեդի գիրկը կուղարկենք: Այսպէս նրանց լաւ չարչարելուց յետոյ գլխաւոր ճակատամարտ կը տանք կղզիների մօտ: Թուրքերին մինչև գիշեր կը պահենք, նրանից յետոյ թէ յաջողուի կը փախչենք, հակառակ դէպքում բոլորս էլ, մինչև վերջին մարդը, կը մեռնենք կոռու մէջ: Իսկ այդ լրբերին սարսափելի կոտորած կը տանք... Ֆանկա, Պետօն, Անգել, ճիշտ չեմ ասում:

—Իրաւ է, վրայ բերեցին երեքը միասին:

Ֆանկայի սիրուն դէմքը, իր խոշոր ոկ աշքերով պայծառացան հպարտ ինքնաբաւականութեամբ, նա անսահման սիրով լցուեց դէպի այդ արծուի հպարտ հայեացքով ու նիհար արտաքինով փոքր մարդը:

—Դէն, մակեդնատական պառաւ գայլ, նաւակովդ հասիր մեր հայգուկներին ու հրաւիրիր այստեղ, որ ընդհանուր խորհրդակցութեամբ որոշ եզրակացութեան դանք...

Մի քանի ըովէ անց խմբի անդամները գեղարուեստական դիրք բռնած շրջապատել էին Վարդարի Արեին: Ազատարար կոռուի հերոս ծերունիներն իրենց դէմքերի սպիներով, նրանց կողքին պատանիները... Դէպի թուրքերը տա-

ծած սարսափելի ատելութիւնն ու ազատութեան ոգին վերացրել էին հասակի խտրութիւնը: Իսկ բէգերի հալածանքից այս ազատութեան բունն ապաւինած անականչ ու քիթը կարած անդամները գագանից աւելի վատ էին թուրքերի համար:

**Ապօստոլը դարձաւ նրանց.**

— Տղեք, մեր անունն ու փառքը Մակեդոնիայի սահմաններից շատ հեռուներն է տարածուել: Տեսնում էք, մինչև իսկ Ստամբուլումն էլ են իրար անցել: Տեսէք թէ ինչպէս են ետեներից ընկել. հազարաւոր ասկեար են հանել: Դէն, քաջեր, թուրքերին ցոյց տանք, թէ ով են հայուկները. պէտք է կոռւենք որքան ոյժ ունենք...

— Ուռա, կեցցէ Մակեդոնիան... ձայն տուին ըմբոստները վեր ձգելով իրենց գլխարկները: Մի քանի հոգի միայն ժիւիօ (կեցցէ) կանչեցին. դրանք նովոբաղարի սանջակից եկած սերբեր էին:

Հետեւեալ գիշեր, մի խումբ, համը ձկների նման հազիւ լսելի շփլթոցով, տասնեակ սուր քթով տափակ նաւակներով սոզացին եղեգնութիւն մէջ: Ակսուեց տաճիկների համար մահարեր հրացանաձգութիւնը, որ խմբի անդամներին ոչ մի վնաս չտուաւ, եթէ չհաշուենք Անգել Թողորովի ուսի քերուածքը, որ տուել էր նրան պատահական գնդակը: Ինչպէս ասում էր խըմբագետ Ապօստոլը, այնպէս էլ եղաւ. տաճկա-

կան բոլոր գնդակներն անցնում էին հայդուկների գլխի վրայով, որովհետեւ ամեն մի համազարկից յետոյ խումբը պառկում էր նաւի յատակին:

Այս անհաւասար կուռում ինչոր գրաւիչ ու հմայող մի բան կար: Մի խումբ ըմբոստներ հերոսաբար զարկւում էին ահագին թուով կանոնաւոր զօրքի հետ: Խաղաղ գիշերին, եղեգնութիւն ու ջրի մէջ պարզ լսում էր ամեն մի ձայն: Սարսափի ամեն մի ձայն, վիրաւորուածի ամեն մի հառաջանք, որ գալիս էր թշնամու նաւերից, դաժան մակեդոնական սրտերում ուրախութեան թրթիւ էր զարթեցնում, ինչպէս երաժշտութեան ձայն: Իսկ երբ յետ նահանջելու հրաման տրուեց և տաճիկները սկսեցին նահանջել, հայդուկները կատարեալ ցնծութեան մէջ էին...

Մենք ստիպեցինք նրանց յետ նահանջել. այս լաւ եղաւ, ասում էր Ապօստոլ խմբապետը. Էականը բարոյական յազմանակն է. այդ նրանց մէջ շփոթութիւն կառաջացնէ: Անատոլիցի զինւորները, որ չափազանց սնահաւատ են, հոգեպէս կընկճուեն, նրանց ձեռները կը թուլանան...

Այս տաք կոռւի մէջ յետ չը մնաց և ժամանակն, որ ոչ մի կերպ չը համաձայնուեց խրճիթում մնալ: Նա ամենայն եռանդով կրակում էր իր մառւզերից տաճիկների վրայ և իրօք խմբի պարծանքը կարող էր համարուել:

VII

Խմբապետն իրաւացի էր: Խմբի ցոյց տուած գիմադրութիւնը շփոթեցրել էր ամբողջ գումարտակին: Ցրտից կուչ եկած, տանջուած ասկեարները յետ դառնալով ասում էին.

— Ճիշտ չէ, որ նրանք ութսուն հոգի են: Նրանք շատ աւելի մեծ թիւ են կազմում: Շեյթանի հետ նրանք կապ ունեն, այդ պատճառով էլ աներևոյթանում են կոռուի ժամանակ...

Նրանք ափ ելան, որ հանգստանան մինչև տուաւոտ: Երիտասարդ գնդապետը գլուխը կորցրել էր: Նա մեծ հաճոյքով ձեռք կը քաշէր պաշարումից ու Սալոնիկ կը վերադառնար, միւայն խայտառակութեան երկիւղն էր նրան կանգնեցնում: Մի խումբ «մակեդոնական լրբերի» դէմ գնալ, ինչպէս անուանում էր Ռեշադը այդ ըմբոստներին, կազմ ու պատրաստ մի գումարտակով ու թնդանօթներով և անզօր յետ դառնալ—այդ սարսափելի է: Միւս կողմից՝ միթէ նա մեղաւոր է, որ այդ լրբերն այդպէս պահւում են եղեգնուառում ու նրանց այնտեղից հանելն անհնարին է:

○

Փաթթուելով վերարկուի մէջ գնդապետը իր սպաներին ժողովի կանչեց:

— Պարոններ, ինչպէս տեսնում եմ, այս գործն աւելի լուրջ է, քան ես կարծում էի...

Որպէսզի զուր տեղը մեր զինուորներին կոտորել չը տանք, առաջարկում եմ պաշարել լիճը. այդպիսով այդ աւազակներին սովամահ անելով գերի կը վերցնենք: Մինչ այդ հեռագրով Սալոնիկից ծանր թնդանօթներ կը պահանջեմ ու ափից կը ոմբակոծենք այդ աւազակների բունը... ես կարծում եմ այս ծրագիրը...

Մինչև իսկ պատահնի Մահմեդը, որի համար գնդապետը օրինակելի էր իբր գերմանական կրթութիւն ստացած մի բարեկիրթ ու խելօք անձնաւորութիւն, մինչև իսկ Մահմեդը կարմրեց իր իշխանաւորի խօսքերից:

Առաջ եկաւ Մուստաֆա-էդղինը: Խարոյկի լուսով երևացող նրա ճակատի հին սպին լցուել էր արիւնով:

— Գնդապետ, դուք կարող էք ինձ դատի մատնել, ձեր ունեցած կապերի ու ծանօթութեանց շնորհիւ կարող էք ինձ աքսորել տալ, բայց պէտք է ասեմ, որ այդպիսի փոքրոգութիւնը ես նախատինք եմ համարում զօրքի համար: Եւ եթէ դուք այդպիսի հեռագիր ուղարկէք, ես իմ սուրը կը փշրեմ ու ինքս կը պոկեմ իմ զինուորական ուսաղիբները...

Ռեշադը իր երկիւղը ծածկող մի ինքնահաւան ժպիտով բացեց իր ոսկէ ատամները:

— Բարեհաճեցէք լոել. ինչպէս էք համարձակում այդպէս խօսել. ձեռներդ ցած... Դուք գիտէք, որ ես կարող եմ... ես ձեզ...

— Ի՞նչ կարող ես, այդ դու օրպական, սառչութիւնը կորցրած յարձակուեց սպան...

Ընկերները իսկոյն գրկեցին Մուստաֆա-էդղին ու մի կողմ տարան, աշխատելով մի կերպ հանգստացնել նրան:

Այս անցքը երիտասարդ գնդապետի համար շատ խրատական էր: Հետեւեալ օրը նա մեծ եռանդով առաջ տարաւ յարձակումը, մինչև իսկ նաւասենեակում չը մնաց, այլ ամբողջ օրը կանգնած էր տախտակամածի վրայ, ձեռքին պատրաստ ունենալով պարաբելում ատրճանակը:

Յարձակումն առաջ էր գնում. հազիւ հազ մինչև երեկոյ այդպէս շարունակուեց, իսկ երեկոյեան մութն ընկնելուն պէս նորից եղեգնուտից լսուեց հրացանների պայթիւններ, նորից սպանուածներ ու վիրաւորներ... Բայց այս անգամ ոչոք, Ռեշադից սկսած մինչև վերջին զինուորը, յետ նահանջելու մասին չէր մտածում անգամ: Զինուորները կատաղած կացիններով ու երկսայրի սուիններով կոտորում էին եղեգը, կարծես թէ նա էր նրանց մարմացած թշնամին: Տաճիկներն աւելի ու աւելի զոհեր տալով մօտենում էին կղղիներին ու պաշարման օղակը քանի գնում սեղմուում էր: Նաւակների յատակում հառաջում ու կծկում էին վիրաւորները, բայց նրանց վրայ ուշադրութիւն դարձնող չը կար: Ամեն մէկը, այդ անտեսանելի թշնամու գնդակի տարափի տակ միայն մի բան էր մըտածում.

«Գուցէ մի ըոպէ ևս էլ ընկնեմ ընկերոջս նման»:

Անատոլիի զինուորները յուսահատ դիմում էին Մարգարէին, որ իր անթափանց վերաբերուով պաշտպանէ նրանց թշնամու գնդակներից... ամենախիստ գնդակահարութեան ենթարկուեց Ռեշադի շոգենաւակը, որի մէջ սպանուած էին հինգ զինուոր. ծանր վիրաւորուած երկու հոգի ջղածգաբար գալարւում էին: Գնդակը նըրանցից մէկի կուրծքն էր խոցել, իսկ միւսի վզին էր դիպել. տաք արիւնը շատրուանի նըրման ցայտում էր նրա պարանոցից ինչպէս մորթուած ոչխարից: Գնդապետը չէր էլ կասկածում, որ գնդակը ծակել է նրա ֆէսը: Գընդակները դիպչում էին նաւակի մետաղեայ մեքենաներին ու տափակում, վայր ընկնում:

Երէկուայ վախկոտ, թուլամորթ գնդապետն այսօր մոռացած վտանգի գիտակցութիւնը, խելագարի նման գոռում էր չորացած շրթունքներով.

— Նրան կենդանի կամ մեռած պէտք է բռնեմ... գնդակէ կարկուտ թափէք եղեգնուտի վրայ...

Զինուորներն անզիտակցաբար կրակում էին, արագ վամփուշաներ դնելով:

Հրացանների փողերը յաճախակի զարկերից բորբոքուել, կարծես թէ շիկացել էին:

Լոեցին խմբի համազարկերը: Տաճիկների կապարէ կարկուտին այլևս չեն պատասխա-

նում: Մի կողմից այդ կարծես թէ լաւ է. նոր զոհեր չեն լինի, բայց միւս կողմից շատ կառ կածելի է, գուցէ նոր թակարդ են լարում մակեդոնացիք...

Զը լինի՞ թէ բոլորը կոտորուեցին... անցաւ Ռեշաղի մտքով, բայց երիտասարդ գնդապետն իսկոյն մի կողմը ձգեց այդ միտքը:

Քիչ յետոյ թեթև քամու հետ մշահոտ զգացուեց ու ծուխի քուլաներ երեացին: Եւ իսկոյն զանազան տեղերում բոցավառուեց եղեգնուարք Գիշերուայ մթութեան մէջ, վառ ու չարագուշակ բորբոքում էին գողդոջ կրակները, աւելի ու աւելի տարածուելով ու հասնելով նաւակախմբերին:

Տաճիկները շփոթուեցին: Զինուորներից շատերը խելագարուած, Ալլահ, Ալլահ կանչելով ցած էին ձգում իրենց հրացաններն ու թիերը. աւելի երկշոտները շփոթութիւնից, կրակից ազատուելու համար, ընկնում էին ջուրը. լողալ չիմացողները ջրասոյզ լինելով զարկւում էին անօգնական ու կորչում յատակում, միւսներն աշխատում էին լողալով ափ հասնել: Իսչպէս ոչխարի հօտը սարսափահար ժամանակ բնագդաբար իրար է խառնուում, այնպէս էլ զինուորներով լի նաւակները սեղմուում էին ու իրար կաշկանդում: Հրդեհը բորբոքելով օդը, ցերեկուայ նման լուսաւորել էր խառնիճաղանձ ու աղաղակող ամբոխին: Ոչ ոք հրամանի չէր լըսում: Ամեն մէկը անասնական բնագդով մտա-

ծում էր միայն իր փրկութեան մասին: Ի դէպ՝ միայն մի հրաման էր տրւում, որ բոլորի ուղածն էր.

— Յետ նահանջէլ:

Բայց շատ թէ քիչ կանոնաւոր նահանջելու հնարաւորութիւն անգամ չըկար: Յիսուն նաւակ այնպէս էին իրար գլխով անցել, այնպէս էին իրար խառնուել թիերով, կողքով ու քթով, որ իրարից բաժանելն անգամ գժուար էր:

Փոքր ինչ համարձակութիւն ստացած գընդապետը նորից գլուխը կորցրեց. բորբոքուող կրակից նօսրացած օդը խեղգում էր նրան, կարմրատակած ու նեարդային յուզմունքից գողում էր նա... Միակ սպան, որ զեկավարում էր բուլորին, այդ Մուսատաֆա-էդինն էր: Մնագոր գայրոյթով նա խեղգուած ձայնով կատաղաբար ինչոր գոռգոռում էր: Նա առաջինն էր նկատել, որ մի երկու վերստ հեռաւորութեան վրայ մի շարք փոքրիկ նաւակներ ճիգ են թափում ափ հասնելու, որտեղ տաճկական սայլերն էին կանգնած: Սպան կատաղութիւնից կապտած, զինուորներին հրամայում էր գնդակահար անել փախստականներին: Բայց ինչ նշանակութիւն ունէր այդպիսի հեռաւորութեան վրայ հարիւրաւոր անկանոն հրացանաձգութիւնները:

— Հալածել, հալածել նրանց, որ ափ ենել չը կարողանան: Աւս եթէ մեր պահակները կարողանան նրանց կանգնեցնել...

Խառնուած նաւակների վրայից ցատկելով  
Մուստաֆա-էդղինը պատահաբար հասաւ շոգե-  
նաւակին:

— Ենտա, մենակ մենք կարող ենք հասնել  
նրանց, դարձաւ նա Ռեշադին. թող մեքենա-  
վարը ամենամեծ արագութեամբ առաջքշէ նաւը:  
Զայրոյթից Մուստաֆա-էդղինը պատրաստ էր  
մեքենավարին սրախողիսող անելու: Հակառակի  
նման շոգենաւակը գտնուում էր խառնուած նա-  
ւատորմի կենդրուում: Մինչեւ ճանապարհ բացին  
ու արշաւանք սկսեցին, անցաւ մօտ քսան րոպէ:

Փախստականներն առանց ուշադրութիւն  
դարձնելու պահակների թոյլ կրակին ափ ելան  
ու յարձակուեցին նրանց վրայ: Առաջին շար-  
քումն էին Ապոստոլ Վոհոգան, Ֆանկան և Ղու-  
լիկը: Տաճիկները թոյլ դիմադրութիւն ցոյց  
տուին: Հրդեհը նրանց ապշեցրել էր իր ահուելի  
կատաղութեամբ: Համարեա բոլոր անատոլցի  
զինուորները այդ կրակով չափում էին և մա-  
կեդոնական խմբապետի առասպելական ոյժը:

Աժդահա Պետօն, հրացանի փողից բռնած  
նրանով գործում էր ինչպէս ծերպերում ոպ-  
րող նախամարդը իր մահակով: Հրացանի կոթի-  
ծանը հարուածների տակ ջախջախում էին թշշ-  
նամիների գանգերը...

Ապոստոլը, ֆանկան ու Անգել Թողորովը  
գնդակահար էին անում իրենց սայլերի ետև  
պահ մտած զինուորներին: Մի քանի վայրկեա-  
նում հայդուկները կոտորեցին սայլերի պահա-

պան զինուորներին, մի քանիսը միայն օդառե-  
լով շփոթութիւնից իրենց գլուխն ազատեցին:  
Նրանց հալածող չը կար: Պէտք էր շտապել: Ափ  
համնող նաւատորմի գնդակներն արդէն վզզում  
էին աջ ու ձախ: Մակեդոնացիներից երկու-  
երեք հոգի արդէն ընկան գնդակահար:  
Հնչում է խմբապետի վճռական ու հնչող  
ձայնը.

— Հինգ վեց հոգի ձիերն ու գոմէշները  
քշէք դէպի սարը, դէպի Սատանի-քարը, մնա-  
ցածներդ արագ պահուէք սայլերի ետևում:

Տաճիկները քանի գնում մօտենում են.  
Նրանք տեսնում են, թէ ինչպէս մի քանի հոգի  
քշում տանում են գոմէշներն ու ձիերի երա-  
մակը: Գոռում են, հրացան արձակում: Քիչ էր  
մնում, որ զինուորները ափ ենեն. մակեդոնա-  
ցիք սայլերի ետևից հրացանի բռնեցին նրանց:  
Բոցավառուող եղեգնուատի լոյսի առաջ տաճիկ-  
ները նրանց համար հիանալի նշան էին, ամեն  
մի հարուած մի նոր զո՞ն էր աւելացնում: Մի  
ըսպէ ևս՝ տաճիկներն ափ գուրս կը գան, մա-  
կեդոնացիք վերջին հրաժեշտի համազարկը տուին  
ու սարերն ելան կարձ ու անմատչելի շաւկու-  
ներով. Էլ նրանց մարդ չէր հասնի: Նրանցից  
զատ, ոչ ոք չը զիտէր այդ հսկայ ժայռերի մէջ  
ոլորապտոյտ շաւիդները...

Ամենից առաջ ափ իջան Ռեշադը, սպան  
ու մի քանի կենդանի մնացած զինուորները: Զրի  
եղերքին աւազի վրայ կուչ ու ձիգ անելով,

ճիգ են թափում փախչելու վիրաւոր մակեդոնացիները, առանց իմանալու թէ ուր, միայն թէ ասկեարների ձեռքը չընկնեն: Զինուորները վրայ հասան, կուցան, ինչոր բան փայլատակեց նրանց ձեռքին...

Ամուր բռնած, կարծես թէ մեծ գունդ լիներ, զինուորները գնդապետի աչքն էին կոփում արիւնուայ գլուխներ... Արիւնը նրանց ձեռներից ցած էր հոսում, ներկելով զինուորների զգեստը: Դաժան գէմքով ասկեարները գոռում էին.

— Ե՛ֆենդի... սա է Ապոստոլ խմբապետի գլուխը:

— Ո՞չ, սա է, գոռում է մի ուրիշը, ինձ պէտք է պարզեատրէք... Այդ ես եմ կարել, ես... ինձ...

Պատժիչ արշաւախումբը սրանով էլ վերջացրեց իր գործը:

Գումարտակից սպանուել էր երեք սպայ և հարիւր քսանուվեց զինուոր վիրաւորուել ու սպանուել էին: Ի լրումն ամենայնի սայլերը յետ դառնալ չը կարողացան, ձի ու գոմէշ չէր մնացել: Իր անյաջողութեան թոյնը Ռեշադը թափեց շրջակայ գիւղերի վրայ: Բոլոր քրիստոնեաների ձիերը, ջորիները, էշերն ու գոմէշները խլեց: Ի հարկէ, բանն առանց կախաղանի, գնդակահարութեան ու տանջանքների չանցաւ:

Եօթն ընկած մակեդոնացիների գլուխները գետին ցցեցին նիզակների վրայ: Հարևան գիւ-

դացիներին խմբերով քշում բերում էին, որ այդ սպանուածների մէջնրանք ցոյց տան Ապոստոլ խմբապետի գլուխը:

Կիւղացիները ցոյց էին տալիս եանկօ Թիշկի, Բագկօ Սալամբաշկի, Զուրովիչ եղբայրների գլուխները, իսկ Ապոստոլ խմբապետի գլուխը չէին գտնում: Ռեշադը մի կողմը կանչեց առաջին վաշտի ենթասպային, որ շան նման հաւատարիմ էր նրան ու բոլղարերէն գիտէր, սաաց.

— Այդ լրբերին բացատրի... որ եթէ ինձ ցոյց չը տան Ապոստոլ խմբապետի գլուխը, բոլորին էլ կը կախեմ...

Ենթասպան «բացատրեց»: Մակեդոնացիք դողալով ակսեցին ուշադիր դիտել սառած ապակեփայլ աչքերով կապտած-դժգոյն դէմքերը...

— Միանգամից դժուար է ճանաչել... Այեթէ դիակն ու հագուստն էլ լիներ... Եյ, ճիշտ որ այս Վարդարի Արեկի գլուխն է... Իսկ որ, Ապոստոլ խմբապետը, նա է որ կայ...

Խեղճ գեղջուկները վախենալով, որ տարածայնութիւն չը լինի, իրար հրում էին արմունկով: Էլ ինչ տարածայնութիւն կարող է լինել երբ սպանացել են նրանց կաշին քերթել: Բաւական է մատ թափ տաս վրաները, իսկոյն միաբերան կասեն.

— Ահա, սա է Վարդարի Արեկ...

կեղծիքը գնդապետի երեսով տալ, ի՞նչ միտք ունէր: Առանց այն էլ նա անմիտ քայլ էր թոյլ տուել իրան:

Գնդապետը նկատելով ընդհանուր արամադրութիւնը, մանաւանդ գուշակելով սպիով ըսպայի միտքը, շարունակեց.

— Մալոնիկ վերադառնալով ես առաջին դումարտակի բոլոր սպաներին կը ներկայացնեմ զինուորական պարգևատրութեան: Նրանց հերոսութիւնը գովասանքից վեր էր: Նրանցից ամենածերը, ամենից փորձուած ու քաջ Մուսաֆա-էդդինը կարժանանայ բացի այդ և գրամական վարձատրութեան...

Սպաների մէջ իրարանցում ընկաւ. բոլորն էլ ինչ-որ անհասկանալի յափշտակութեամբ իրար էին նայում. ինչ ազնիւ հոգի ունի մեր գնդապետը: Երէկ չէր, որ Մուստաֆա-էդդինը տաքանալով վիրաւորեց նրան, որի համար պատերազմական գրութեան պատճառով կարելի էր նրան հրացանազարկ անել, բայց Ռեշադ բէյը ոչ միայն ներեց նրան, այլև առանձին պատուի է արժանացնում. կեցցէ Ռեշադ բէյը. տաճկաց բանակում գեռ կան արժանաւոր մարդիկ:

— Իսկ այժմ, վերջացրեց Ռեշադը, խմենք մեր յաջողութեան առթիւ:

Շամպանի զինով լի երկու արկղ գեռ մնացել էր:

— Բայց, պարոններ, ներողութիւն եմ խընդ-

### VIII

Ռեշադ-բէյը փառաւորապէս տօնում է իր «յաղթութիւնը»: Նա գումարտակը ոտքի հանեց, շարքեր կազմել հրամայեց, անցաւ ու ողջունեց բոլորին: Շարքերում նկատելով թեթև վիրաւորուածներ, արագ մօտեցաւ նրանց ու ոսկէ դրամ ընծայեց: Ֆողովելով սպաներին ու ենթասպաններին, գնապետը դարձաւ նրանց.

— Իմ սիրելի կոռուի ընկերներ... Շնորհաւորում եմ մեր դժուար արշաւանքի յաջող ելքը: Յաջող եմ անուանում, որովհետեւ չընայած մեր տուած ծանր զոհերին, մենք հասել ենք դլաւոր նպատակին: Մակեդոնական ժողովը դին քանի տարուց ի վեր անհանգիստ անողի գլուխը մեր ձեռքին է: Տեղական ռայեան, որ լաւ գիտէ աւազակապետին, որին քիչ անգամ չէ, որ ստիպուած ապաստան է տուել, հենց առաջին անգամից միաբերան հաստատեց, որ նրան ցոյց տուած գլուխը Սպասարինն է: Այդ մասին կասկած անգամ չի կարող լինել:

Ռեշադը կասկածոտ մի հայեացք ձգեց սպաների վրայ: Նրանք զոհ չէին, որ ակամայից պէտք է մասնակցեն այդ խարէութեանը: Ամենից աւելի այդ ազդեց ձշմարտասէր Մուստաֆա-էդդինի վրայ: Բայց ի՞նչ կարելի էր անել:

բում, բաժակներ չկան և պէտք է հասարակ թասերով խմենք. Եհ, ինչ արած, այս պէտք է մեռած համարուէր: Կոստանդնուպոլիս ուղարկած բոլոր պաշտօնական թղթերի մէջ մակեդոնական խմբագետը մեռած էր: Կարծէք թէ ինքը, Ալուստոլ խմբագետն էլ դիտմամբ նպաստում էր այդ լուրերի հաստատմանը: Երկար ժամանակ նա կենդանութեան նշաններ չէր ցոյց տալիս: Ուր է նա, ինչ է անում—մակեդոնացիներն էլ չէին իմանում: Խըմբագետի հետ միասին մեռել էին և Վարդարի Սըրէի բոլոր քաջերը... Վարդարի արել մայր է մտել, գուցէ մէկ օր աւելի պայծառ լուսով փայլելու, առաջուանից աւելի զօրեղ ճաճանչներով լուսաւորելու...

Քնէք, քնէք հանգիստ... Մօտիկ, շատ մօտ ձեզ հսկում են բարակ ցցերի վրայ անկած այդ դալուկ-դժգոյն գէմքերը... Նրանցից մէկի երեսն արդէն ուռել է... Այդ կըտսեր Զուրովիչի գէմքն է: Միւսի կաշին է տրաքել և ինչ-որ թանձը հեղուկ կաթկաթում է աւազի վրայ:

Երեկոյեան դէմ նրանք բոլորն էլ սկսեցին քայքայուել... Բոլորը, բացի մէկից, որ առանձին ինսամքով աղ էր զրած պինդ կաշուէ պարկի մէջ: Պարկի մօտ պահապան էր զրած...

Թէպէտ գեներալ-նահանգապետ Նազիմ-փաշան մի բոպէ անգամ չըկառածեց, որ Ալուստոլ-Վուողի գլուխը իսկականը չէ, որին լաւ ճանաչում էր նա տեսած նկարներով, այնուամենայնիւ այնպէս ձևացրեց, իբր թէ հաւատաց: Մըտքերը խաղաղացնելու համար այդ անհրաժեշտ

էր: Եթէ մինչև իսկ կենդանի էր մնացել այդ առասպելական աւազակապետը, պաշտօնապէս նա պէտք է մեռած համարուէր: Կոստանդնուպոլիս ուղարկած բոլոր պաշտօնական թղթերի մէջ մակեդոնական խմբագետը մեռած էր: Կարծէք թէ ինքը, Ալուստոլ խմբագետն էլ դիտմամբ նպաստում էր այդ լուրերի հաստատմանը: Երկար ժամանակ նա կենդանութեան նշաններ չէր ցոյց տալիս: Ուր է նա, ինչ է անում—մակեդոնացիներն էլ չէին իմանում: Խըմբագետի հետ միասին մեռել էին և Վարդարի Սըրէի բոլոր քաջերը... Վարդարի արել մայր է մտել, գուցէ մէկ օր աւելի պայծառ լուսով փայլելու, առաջուանից աւելի զօրեղ ճաճանչներով լուսաւորելու...

Ո՞վ գիտէ...

Իր քաջութեան համար Ռեշադ-բէյը գեներալի աստիճան ստացաւ, այժմ նա փաշայ էր ու Սալոնիկի զօրաբանակում կրկնակի գնդի հրամանատար: Տասնեակ—հարիւր անգամ նա ոգեստութեամբ պատմում էր հետաքրքիր ունկընդիրներին իր արշաւանքի մասին: Վառելով իր երեսակայութիւնն ու համեմելով պատմութիւնը զանազան արկածներով, վերջապէս ամենայն անկեղծութեամբ ինքն էլ սկսեց հաւատալ, որ գլխատուածը Ալուստոլ խմբագետն էր: Եւ եթէ մէկն ու մէկը նրան ասէր, թէ այդ մակեդոնական աւազակապետը կենդանի է, Ռեշադ փա-

շան անշուշտ ամենայն լրջութեամբ կարող էր  
զարմանալ:

Գուցէ բախտը նրանց մէկ անգամ էլ իրար  
դէմ հանէ: Ո՞վ գիտէ... Բալկաններում ամեն  
ինչ հնարաւոր է...

### ՀԱՅ ԿԱՄԱՀՈՐՆԵՐԻՆ

Չեր մամբին մատաղ, կտրի՛ եղբայրներ,  
Երգ ու ժպիտով բռնած ծեր ուղին  
Պիտի հաւատանք, որ պայծառ օրեր  
Խինդ ու աւետիք բերի մեր ցեղին:

Դարեր յուսախաք մեր ղժբախտ ցեղին  
Էլ ով պիտ մեկնէր ձեռքը վրկութեան,  
Էլ ով պիտ կանգնէր պաշտպան անմեղին,  
Եթէ չունենար որդիք ձեզ նման:

Վարդան, սթափմի՛ր ղարերի քնից,  
Տես փառքիդ արժան քո հայ զաւակին,  
Որքան էլ ցաւեր անցնեն մեր զիսից,  
Հաւատն, հայր, քո հայն է կրկին:

Աս' օն քաջարի, իմ հայ եղբայրներ,  
Չեր հայ քոյրերի կեանքը ծեզ մատաղ,  
Առաջ, միշտ առաջ, կոիւ ու աւեր,  
Արեան դէմ' արիմն, ապա կեանք իսաղաղ...

Արմենունի Տիգրանեան

## ԱՐԺԻՒՆԵՐԻ ԲՆՈՒՄ

(Ալբանացիների կեանիից)

Պ. Գ. Օ Բ Դ Ի Ն Ց Ե Ւ Խ

1

Մեծ խնձոյք ու իրարանցում է տեղի ունենում հուսինի վալի՝ Տուրզուտ բէյի տանը։ Այսօր նա պսակում է իր գուստը Զելմային և հարսանեկան հանդէս կատարում։ Վաղ առաւօտից հիւրեր են գալիս. բազմութիւնն այնքան շատ է, որ նրանք հազիւ-հազ տեղաւորւում են զով սենեակներում փոած գորգելի վրայ։ Բայց հիւրերին վերջ չը կայ... Տուրզուտ բէյը կարգագրեց բակը հովանի անել պարուսինի ծածկոցով, փոել թաղիք ու խսիր, նրանց վրայ գորգեր բացել. և ծառաներն սկսեցին հիւրերին տեղաւորել բակում։

Ամենից ուշ եկաւ Մալիսիայից երիտասարդ Դանիէլ աղան, որ իր պապերի նման գեաւուր<sup>\*)</sup> էր հաւատով, բայց համարձակ էր և ամբողջ Ալբանիայում յայտնի կռուող էր, որի անունը

\*) Ալբանական ցեղերից մէկն են արնաուտները. գրանը քրիստոնեայ-կաթոլիկներ են։

միայն բաւական էր, որ սե-լեռնցիք ոտքի ել-նէին:

Տուրդուտ բէյը, որ երիտասարդ ժամանակ մասնակցել էր ոռուս-տաճկական պատերազմին, սիրում էր քաջերին, առանց խառութիւն դնելու, թէ նրանք ամենակարող Աստծուն որ տաճարումն են աղօթում, և հենց այդ պատճառով յատուկ մարդ էր ուղարկել հրաւիրելու ալբանական այդ յայտնի իշխանին՝ իր ընտանեկան հանդէսին մասնակցելու: Առանձին պատուով ընդունեց նրան, առաջնորդելով հիւրերով լի բակից և բազմեցրեց իր կողքին, ամենայայտնի իշխանների շարքում, որոնք նոյնպէս եկել էին Զելմայի հարսանիքին:

Սրանների ցած կամարների տակ հաղիւ խուլ ձայնով լսում է զուռնայի ձայնը ու ծեր Մուստաֆան իր դուրեկան ձայնով երգում է անցած-գնացած պատերազմները, երբ քաջը սուրը ձեռին փաղիշահի իշխանութեան փառքն էր տարածում: Երբեմն ուզմական երգերին փոխարինում են ուրիշները, որտեղ երգում են խորհրդաւոր ափերը շոյող ծովի կապոյտ ալիքները, կոյսի վառվուն աչքերը ու լուսնի նման բոլորած գէմքն ու շինարի բոյը: Այդ երգերում պատմւում է սիրահար պատանու տան-ջանքը հարեմի բարձր ու անմատչելի պարիսպների տակ, աղախիններից ու ծառաներից ծածուկ գաղտնի տեսակցութիւններն ու համբոյը, մի խօսքով այն բոլորի մասին, որ հա-

ւասարապէս մատչելի է ամենքին ու ամենուը րեք, ինչպէս Արաբիայի անապատներում, Ռոկեղջիւրի փարթամ ու հարուստ ափերին, այնպէս և ալբանական մռայլ լեռների գրկում:

Այդ երգերը լսելով ծերերը մտազբաղ շարժում են գլուխները յիշելով անցած-գնացած երիտասարդութիւնը, ջահէնները ոլորում են իրենց թուխ բեխներն ու ակամայից նայում մետաքսէ վարագոյրներին, որոնց ետևից լսում էին կանանց ծիծակցութիւնը: Այս-աեղ խմբուած Զելմայի ընկերունիներն ուզում էին նրա հետ միասին անցկացնել նրա կուսական կեանքի այդ վերջին օրը:

Կանայքն էլ ուշադրութեամբ լսում էին տղամարդկանց խօսակցութիւնը: Նրանցից ոմանք թէկ տղամարդկանց բաժնում փեսացու կամ եղեայր ունեն, բայց մարգարէի գրած օրէնքին հնազանդ՝ նրանք իրաւունք չունեն տեսնելու իրենց սիրելիների գէմքերը, այդ պատճառով էլ բաւականանում են լսելով զուռնայի խուլ ձայնն ու իրենց երեակայութեան մէջ վառ պատկերացնելով Մուստաֆայի երգերի հերոսներին՝ խոր ախ են քաշում...

Սենեակներում շոգ է ու տոթ: Բազմաթիւ ձրագներն աչք են խտղառում, համեղ խորտիկներից բարձրացող տաք գոլորշին առանձին բուրմունքով լցնում է օդը: Հիւրասէր տան տիրոջը չը նեղացնելու ու առանձին բաւականութիւն պատճառելու համար՝ հիւրերն աշխա-

տում են իրենց ախորժակով իրար գերազանցել. բայց իւղալի, առատ կերակուրները հիւրերի ծարաւն է շարժում:

Սառցաջուրը չի զովացնում նրանց ծարաւը. և վերջապէս պղնձէ երկարավիզ դաւերում ջուր չէ մնացել. անյարմար է վերջապէս, որ հիւրերը Հուսինի վալի Տուրդուտ-րէյի նազելի աղջկայ կենացը պարզ ջրով խմեն: Իրաւէ, սուրբ գիրքն ուղղափառներին թոյլ չէ տալիս խաղողի ողկոյզներից քամած համեղ հիւթը խմել, բայց ոչինչ չէ ասում այլ խմիչքների նկատմամբ, որ մարդու սիրտն ուրախացնում են ու յուզուած ուղեղը հանգստացնում...

Այ, թէ ինչով է բացարւում հիւրերի բաժակներում դեղին սաթի նման փրփրացող գարեջուրը, որ աստիճանաբար փոխում է բիւրեղանման պարզ հեղուկի, որ կրակի նման այրում է ճաշակողների քիմքը:

Տաք հոսանք է անցնում նրանից խմողների մարմնով, գլուխը ծանրանում, բայց ձայներն աւելի համարձակ դառնում ու ծիծաղն աւելի աղմիկայից է հնչում սրանների կամարների տակ:

Դանիէլ աղան սկզբում խմում էր միւսներին հաւասար. բայց նա նկատում է, որ հարևանների աչքերը կամաց-կամաց սկսում են մթնել. նա բաժակն առանց դատարկելու սկսում է ցած դնել, ինքը ոչ ոքի հետ չի խօսում, միայն ուշադրութեամբ լսում է բորբոքուած ձայները, կարծէք թէ ուղում է նրանց գաղտնիք-

ներն իմանալ, որ ուրիշ անգամ երբէք չի յաջողուի:

Բայց նրա յոյսերն ի գերև ելան... Ուրախ տրամադրուած հիւրերը ոչ զահազուրկ ծեր փաղիշահի մասին են խօսում, ոչ Սելերան թագաւորի նենդ ծրագիրների և ոչ էլ մակեդոնական շարժման մասին: Փոքրիկ խմբեր կազմելով նրանք ձայնակցում են ծեր Մուստաֆային, իրար պատմում իրենց անցած-գնացած օրերի քաջագործութիւններն ու արկածները, յիշում են երիտասարդական վառ օրերի դիւթիչ պատկերները, որ այժմ այնպէս անհասանելի է նրանց զգացումներին: Ուրախութեան արցունքն աչքերին ծերունիները պատմում են իրենց առաջին սիրոյ ու յափշտակութեան մասին, իսկ ջահէլները լսում են նրանց պատմութիւնները...

Դանիէլ աղան պարզ տեսնում է, որ առիթ չէ ունենալու նոր լուրեր լսելու Պըիզրենից, Ուսկիւրից ու Սալոնիկից և անփոյթ կերպով սկսում է դիտել պատից կախած զէնքերը, որոնց մէջ աչքի էին ընկնում հազուագիւտ ու թանգարժէք ատրճանակներ ու հրացաններ և գեղարուեստական կեռ թրեր...

Իր հայեացքը աստիճանաբար մէկից միւսը զարձնելով, նրա հայեացքը կանգ է առնում խնձոյքի դահլիճը բաժանող վարագոյրների վրայ: Նա անուշադիր կերպով նայում է խայտաբղէտ գոյներին, որ այնպէս տարօրինակ ուրուագծում

են վարագոյրը, նրա անփոյթ ծալքերին, որ երբեմն, մտնաւանդ վարագոյրների միացման տեղերում, իրար վրայ է քաշած, որ յետ գնալով չը բացուեն և ճեղքուածք չառաջցնեն... Պարապութիւնից նա սկսեց դիտել, թէ քանի այդպիսի ծալքեր կան:

Մէկ, երկու... Զորրորդը հենց նրա աջ ուսի մօտն էր... Կանայք համոզուած լինելով, որ այժմ տղամարդկանց բաժնից նրանց վրայ ուշադրութիւն դարձնող չի լինի, աւելի համարձակ էին դառել:

Նրանց ձայնն աւելի զօրեղ էր լսուում, ծիծաղն աւելի համարձակ էր ու հնչուն:

Շարժւում է վարագոյրը, փոքրիկ ծալքերը ալիքների նման գլորուում են նրա լայնութեամբ, շարժում են նստարանները, լսուում է նրանց թոյլ ճռճորոցը... Քանի զոյտ հետաքրքրուող աչքեր դիտում են տղամարդկանց բաժինն այդ բացուածքներից:

Դանիէլ աղան ժպտալով մտածում է այդ մասին, կրկին հայեացքը ձգելով իր հարևանների վրայ. նա ձեռքի զգոյշ շարժումով ծալքերը բացեց ու հայեացքն ուղղեց բացուածքի միւս կողմը...

Վարագոյրի ետելը շարուած էին հասարակ կաշխով պատած փոքրիկ աթոռներ, որոնց վրայ մէկ-մէկ, երբեմն և զոյտ-զոյտ Զելմայի ընկերունիները կանգնած՝ հիւրերից ծածուկ դիտում են տղամարդկանց:

Երիտասարդ ալբանացուն այդ ծիծաղելի թուաց, բայց նա զսպում է իր ուրախութիւնը, իսկ նրա հայեացքն արագ անցնում է օրիորդ-ներից մէկից միւսի վրայ: Նրանք բոլորն էլ համարեա թէ սև ու խիտ մազեր ունեն, մեծ մեծ ու նշանակ աչքեր ու մի փոքր խիստ, մինչև իսկ սուր դիմագծեր: Դժուար է ասել, թէ հարսի ընկերունիներից որ մէկն է աւելի զուր զալիս նրան: Նրանք բոլորն էլ լաւ են, կուսական թարմութիւն է բուրում նրանցից, որ ամենատգեղ դէմքն անդամ կարող է անսահման դիւրալի դարձնել ու սիրուն:

Դանիէլ աղան նայում էր նրանց այնպիսի մի հաճոյքով, ինչպիսին նա շատ անդամ զգում էր, երբ դիտում էր ծովի լազուր հայելին, որի մէջ գեռ նոր է սկսում շողալ իր առաջին ճառագայթներով հորիզոնի ետևից երեցող արելը. կամ երբ դիտում էր մոայլ լեռների ստորոտում ծաղկող թարմ հովիտը, որտեղ նա իր պատանեկութեան օրերն էր անցրել այնպէս աղատ, ինչպէս և նրա ընկերները՝ սրատես ու սրաթե աղատ արծիւները...

Բայց կարծէք թէ կաթուածահար հղած՝ յանկարծ ցնցւում է ալբանացին, աւելի լայն բացում է վարագոյրն ու նրա հայեացքը կառչում է աղջիկներից մէկի գէմքին:

Նա նստած է ընկերունիներից հեռու՝ հարսի կողքին և կամացուկ ինչ-որ բան է պատմում: Նրա աչքերը կիսախուփ են, երկար ար-

տեանունքները ստուեր են ձգում քնքոյշ վարդագոյն այտերի վրայ: Նրա աննման նուրբ շըլթունքները հազիւ շարժւում են, որոնց բացուածքից երբեմն փայլում են նրա կաթնագոյն սպիտակ ատամները: Նրա բարակ դալուկ ձեռները դանդաղօրէն հիւսում են բացուած հիւսի ծայրերը:

Նա է:

Դանիէլ-աղան վճռական մի շարժումով փակում է վարագոյրն ու հեռանում:

Լուսաբացին մօտ միայն, հիւրերը հրաժեշտի ողջոյն են տալիս ու կամաց-կամաց հեռանում Տուրդուտ բէյի հիւրասէր տանից. իսկ ալբանացին, որ վերջինն էր եկել, դեռ կէս գիշեր չեղած, մնաս-բարովի ողջոյն տուեցատան տիրոջը, հրաժարուելով գիշերապահ առաջնորդների ուղեկցութիւնից, թուաւ իր բարակոտն նժոյգի մէջքը ու փոթորկի նման սլացաւ Հուսինից:

II

Լուսինը չէ երկում: Բիւրաւոր աստղերը փալիլում ու առկայծում են գիշերային երկնքի ու թափշի վրայ: Նրանց թոյլ ճառագայթներն անդարձ կորչում են եղիպատացորենի արտերում և միայն մի քանի լուսաւոր կէտերի շողքն է, որ անդրագառնում է քաղաքի ծայրում գտնուող Սելիմ-բաշու տան մօտ հոսող գետակում: Հե-

ոռւից երկում են Հուսինի կարմրագոյն ճրագները: Խիտ թաւուտը փակում է քարքարոտ ճանապարհը, որ հազիւ նկատելի է ու ոլորապըտոյտ անցնելով բլուրների միջով կորչում է լեռներում:

Վշշում է ջուրն ու նրա անվերջ ու տաղառուկ ոռնոցը բոլորովին խացնում ու խեղգում է միւս բոլոր ձայները: Ասենք ուրիշ ձայն չի էլ լսւում... Պատահական անցորդը կարող էր զգալ անհամբեր ձիու փոնչոցը, բայց Դանիէլ աղան իր նժոյգը բոլորովին գետեզըն է կապել, ուր ամեն բոլէ թեթև բամուց անգամ զարիվայրից քարեր են գլորում դէպի գետը, այժմ ոչ ոք չի լսի, թէ ինչպէս նրա ձին իր սմբակներով գետինն է քանդում: Ինքը կպել է մենակ բուսած չոր բարդենուն ու անհամբեր գիտում է թոյլ լուսաւորուած ճանապարհը:

Լարուած նայում է նա, բայց մի քանի սաժէն հեռաւորութեան վրայ բան չէ երկում: Նա լսողութիւնը հայեացքից պակաս չէ լարել: Նրա ականջին հասաւ հազիւ լսելի մի թեթև ձայն...

Քայլեր են... Ո՞չ, այդ ձիւն էր, որ ծառից պոկուեց, ցած ընկաւ ու քամին բշեց նրան և ճանապարհի միւս կողմը ձգեց:

Նորից լուռ է. այնպիսի մի լսութիւն, որի ժամանակ լսելի է մինչև իսկ սրտի բարախումը: Դանիէլ աղան յենուեց ձախ ոտի վրայ, որ

աջը մի փոքր հանգստանայ. փորձում է ետ-  
թաղանը դուրս քաշել, որ տեսնի՝ սուրը հեշ-  
տութեամբ է դուրս գալիս, ու նորից ականջ է  
դնում: Նա այսպէս է լարել ուշադրութիւնը, որ  
պարզ գանազանում է եղիպտացորենի արտի  
տերմների խշոցը բարձր փոշոտած խոտի սու-  
րոցից, բայց իր սպասածին չի տեսնում:

Այդպէս անցնում են ժամերն իրար ետից  
և մինչ նա անհամբերութիւնից սկսում է դո-  
դալ, ալբանացու ականջներին ինչ-որ ձայն է  
հասնում: Ալբանացին ցնցւում է, որս տեսած  
ուրուրի նման դիրք է մտնում ու ամբողջ  
մարմնով ձգւում է առաջ:

Այս անգամ արդէն սխալուել չի կարելի.  
ձայնը կրկնւում է քանի գնում աւելի մօտե-  
նում է: Այժմ մինչև իսկ պարզ քայլեր են լրս-  
ւում, թեթև, բայց գիշերային լուսութեան մէջ  
պարզ լսուող քայլեր... Մինչև իսկ մթութեան  
մէջ երեաց և մի բարձրահասակ, նուրբ կաղ-  
մուածք:

Դանիէլ աղան զգուշութեամբ իջեցնում է  
ատրճանակի ոտն ու արագ կարում է ճանա-  
պարհը:

Երկիւղի մի ճնշուած բացականչութիւն, ու  
վախեցած ճանապարհորդը՝ մի կին, կանգ  
առաւ:

— Ո՞վ ես դու, յանուն Ալլահի ասա, սա-  
տանայ ես, թէ աւագակ արնաւուտ:

Լուսութիւն:

— Զը մօտենաս, թէ չէ շան պէս կը սատ-  
կացնեմ:

— Աղջիկ, աշքերիդ նետերն ատրճանակի  
գնդակից աւելի խիստ հարուած են տալիս:

Այս խօսքերն ալբանացին մի առանձին մեղ-  
մութեամբ արտասանեց, որ միանգամայն չէր  
յիշեցնում նրա արձուի նման կռանչացող ձայնը:

— Այս վաղուց է, որ ուղղափառները մեծ  
ճանապարհին սկսել են կանանց կանգնեցնել:

— Ես մահմեդական չեմ, աղջիկ:

— Ապա ով ես դու: Եթէ դու կարծում ես,  
որ զինուած տղամարդու համար ամօթաբեր չէ  
գիշերով անզէն կնոջ առաջը կտրել, քաջութիւն  
ունեցիր պարզ ասելու, թէ ով ես դու:

Ալբանացին կանգնած էր իր դէմ բոնած  
ատրճանակից միայն երկու քայլի վրայ:

— Լաւ, աղջիկ, ես կասեմ քեզ անունս:  
Սարերում շատերին է յայտնի Դանիէլ աղայի  
անունը, դուցէ դուք գաշտեցիներդ չէք լսել  
նրա մասին:

Աղջկայ ձեռքը թուլացաւ ու ատրճանակը  
կախ ընկաւ:

Երիտասարդ մարտիկը իրը թէ չը նկատեց  
ու չը հասկացաւ այդ:

— Այո, ես աւաղակ արնաւուտ եմ, ինչպէս  
դու ասացիր, կամաց շարունակեց նա, կարծես  
իւրաքանչիւր խօսքը լաւ կշռելով: Իմ անունը  
քեզ անձանօթ է, բայց եթէ ուզում ես, Զիա-  
դէ—տեսնում ես, քո անունը ես գիտեմ—դու

հեշտութեամբ կարող էիր յիշել գիշերուայ մը-  
թութեամբ քողարկուած իմ դէմքը...

—Ասա... ես լսում եմ:

—Եաւ, ես կասեմ... Յիշում ես, Զիադէ,  
ամիս ու կէս առաջ, մենակ մի ճամբորդ իջաւ  
այս գետակի ափը իր ձին ջրելու. դու կան-  
գնած էիր այնտեղ ջրով լի սափորը ձեսիդ: Քո  
երեսը բաց էր. մեզանից զատ ոչ ոք չը կար  
և մենք երկար դիտում էինք իրար: Զը գիտեմ  
այն ժամանակ դու ի՞նչ էիր մտածում, բայց  
արնաւուտ ճամբորդը քեզ նայելով զգաց, որ  
նրա սիրաը բաբախում է բոնուած թոնչակի  
նման. նա զմայլուել էր քեզանով, ինչպէս սո-  
խակն է գերւում իր վարդով պարզ լուսընկայ  
գիշերին. բայց նրա պարտքն ու եղբայրները  
պահանջում էին, որ նա բոպէները դուր չը  
վատնէ...

—Այդ դու էիր, ընդհատեց աղջիկը, ու  
նրա ձայնը դողաց:

Նա շարունակեց, առանց աղջկան լսելու.

—Դանիէլ աղան նժոյգը ջրելով արշաւեց  
հեռու... Շատ ժամանակ չի անցել բայց այդ  
ժամանակամիջոցը ինձ թւում է թէ տաղտուկ  
ու ձանձրալի տարիների մի շարք է եղել: Որ-  
տեղ էլ նա եղել է, ինչ գործով էլ որ զբաղուել  
է, նրա առաջ միշտ պատկերացել են քո շինա-  
րի հասակը, քո աննման աշքերը, որ իրենց մէջ  
տիեզերքի ամբողջ ուրախութիւնն են արտա-  
յայտում... Այլևս ոյժ չունենալով իր զգացում-

ների դէմ մտքառելու, նա ագահաբար առիթ էր  
փնտրում նորից քեզ հանդիպելու, բայց, աւաղ,  
այդ բախտաւոր բոպէն ու առիթը երկար, եր-  
կար ժամանակ փախչում էին նրանից...

—Իսկ երբ յաջողուել է, աւազակի նման  
դարան մտաւ ինձ օրսալու, խորամանկութեամբ  
վրայ բերեց աղջիկը:

Մութն էր, Զիադէի ժպիտը նկատելի չէր.  
միայն նրա ձայնն էր մատնում իրան:

—Այս, դարան մտաւ քեզ յայտնելու, որ  
նրա կեանքն այն օրից կորցրել է իր խորհուր-  
դը, որ նրա արել մարել է և միայն դու կա-  
րող ես նրան նոր կեանք ու արե տալ, ոյժ  
ներշնչել և ուրախութեան շողերով լուսաւորել  
նրա հոգին...

Աղջիկը լուռ գլուխը կախեց:

—Իսչպէս, վերջապէս արտանանեց նա  
մեղմ ու կարուկ:

—Զիադէ, բացականչեց արնաւուտն ու բո-  
լորովին մօտեցաւ նրան, ոտով մի կողմ ձգելով  
վաղուց գետին ընկած ատրճանակը.—Զիադէ,  
ասա, որ դու գեռ չես մոռացել այն բոպէները,  
և արել նորից այնպէս պայծառ կը փայլի իմ  
հոգում և ես ուրախ ու լի զգացումներով նորից  
կապեմ մեր սարերով...

—Ոչ, Դանիէլ-աղա, ես յիշում եմ այն...  
բայց յետո՞յ: Ճիշտ է, քո անունը յայտնի է  
ողջ Ալբանիայում, բայց դու գետաւոր ես, դու  
սուլթանի և իմ հայրենակիցների թշնամին

ես... Ոչ իմ հայրը, ոչ էլ եղբայրս չեն համաձայնուի, որ ես այն մարդու կինը լինեմ, որի անունը փաղիշահի ողջ երկրում մայրերը տալիս են իրենց զաւակներին ահ ներշնչելու համար:

— Զե՞ն համաձայնուի: Բայց միթէ աւելի արդար ձայն կայ քան սեփական սրտի ձայնը, միթէ քո հոգին էլ այնպէս աղատ չէ, ինչպէս և քո եղբօր և հօր հոգիները:

Զիադէն բացասական կերպով գլուխը շարժեց:

— Ինքն Ալլահը, իր մարգարէի միջոցով—թող օրհնուած լինի նրա անունը—կանանց հրամայել է տղամարդու հնագանդ ստրուկը լինել... իսկ Ամենակարողի կամքը սուրբ է:

— Դու սոռանում ես, որ մարգարէն ինքը տղամարդ էր, փնթինթաց Դանիէլ աղան, կնճռելով իր թանձը ունքերը: Նա հաշիւ էլ չունէր այլ կերպ ասելու... Եթէ նոյն իսկ այդպէս էլ լինի, եթէ նոյն իսկ Ալլահի կամքն էլ այդ է, այնուամենայնիւ ամեն ոք իրաւունք ունի չը հնագանդուելու, որ իր ու միւսների բախտը ոտի տակ չը տայ:

Աղջիկը չէր պատասխանում. լռել էր և արնաւուար. լսելի էր միայն նրանց երկուսի շնչառութիւնը...

— Այն կամ ոչ, խոպոտ ձայնով արտասանեց վերջապէս Դանիէլ աղան:

Պատասխան չըկար, բայց ալբանացին հասկացաւ նրան առանց խօսքերի:

— Մնաս բարով, արտասանեց նա. դու սխալուեցիր, փոքրիկ թաջնակը մեռել է արդէն քո սրտում...

Լսուեց թփերի խշխոցը, մի սուլոց ու նրան իբր պատասխան ձիու խրինջոցը...

Մի քանի րոպէ անց ալբանցին ձին հեծած ճանապարհ ընկաւ: Զիադէն անշարժ կանգնած էր նոյն տեղում: Նա վերջին անգամ շուռ եկաւ դէպի աղջիկը, ձեռքով մնաս բարովի նշան տրաւ, ու կպաւ նժոյգի բաշին...

— Դանիէլ, նոյն վայրկեանին լսուեց աղջկայ ձայնը:

Նրա ստուերանման թեթև իրանը երեաց նժոյգի տուած. առանց մի խօսք ասելու, հեծեալը յենուելով ասպանդակներին գրկեց նրա իրանը ու առաւ ձիու վրայ, և լեռնային նժոյգը կրկնակի բեռը շալակած առաւօտուայ մառախլապատ մշուշում առած սլացաւ:

III

Մոայլ ու մութ լեռներ: Երբեմնակի նրանց վրայ երեսում են հատ-հատ մացառներ, շրջապատուած արևակէզ մերկ ժայռերով: Նեղ, կարծէք թէ գանակով կտրատած ճեղքերը բաժանում են իրարից ահարկու հսկայական ժայռերը: Նրանց մոայլ անդունդներից խուլ դղրդում

է սեպ ժայռերի մէջ ճնշուած լեռնային գետակը: Լեռների մերկ գագաթները ձգւում են, իրենց մէջ բանալով ժայռոտ տափարակներ, որոնց երեք կողմից պատում է անդունդը, իսկ մի կողմից լեռնացած սեպ ժայռերը...

Կարծէք թէ արծուից զատ ուրիշ ոչ մի կենդանի էակ հնարաւորութիւն չի ունենայ այդ անմատչելի տեղերը համեմ: Զարմանալին այն է, որ մարդ արարածն ևս համում է թռչունների արքայի բարձունքներին: Լեռների զափիվայրերում, որ շատ թէ քիչ պաշտպանուած է աւերող փոթորիկներից, ցաք ու ցրիւ ընկած են մի քանի գետնափոր խրճիթներ՝ տափակ հողէ կտուրներով: Նրանցից մէկի ցածրիկ պատից մէկում բացւում են դուռն ու երկու փոքրիկ պատուհան, որոնք զուրկ են ապակիներից, ուր արեի առաջին ճառագայթների հետ ներս է թափանցում լեռնային թարմ ու ցուրտ օդը, իսկ աշնանը՝ անձրեի ցուրտ կաթիլները: Բայց մանկութիւնից ցուրտ ու իրտ կլիմային վարժ մարդկանց համար այդ ոչինչ է: Այդ բոլորը նրանց համար այնպէս բնական է, ինչպէս և տաք ծովափերում նայնջենու ու ձիթապտղի բուրմունքով արբեցածների համար երազական անուշաբոյր քամին ու արեով ջերմացած հուժեկու ալիքների միապաղաղ մռնչիւնն ու ելեկջը...

Այդ մարդիկ, ամպերից բարձր իրենց գիւղերում, ջերմութիւն տենչալու և զօրեղ զգալու ընդունակութիւնը չեն մռուածում: Նրանք ոչ մի

արգելք չը ճանաչելով, սովոր են զէնքը ձեռին պաշտպանել իրենց իրաւունքները կամ աւելի ճիշտ՝ այն ամենը, ինչ որ իրաւունքի բռնաբարումն են համարում և աւելի բուռն ոգեորութեամբ են պաշտպանում այն, քան դաշտի մեղկացած երիտասարդը...

Թող մի բոսէ նրանք կասկածեն, որ մէկն ու մէկը համարձակւում է խախտել նրանց մերկ լեռների ազատութիւնը, փեթակում արթնացած, յուզուած մեղուների նման ալբանացիներն աղմկայոյզ ոտքի, կելնեն իրենց ամպամած շաւիղներում, մի ցեղից միւսը սուրհանդակներ կուղարկեն, որից յետոյ եաթաղաններով ու հրացաններով զինուած՝ լեռնցիների հոսանքը յաղթական կերպով սարից գէպի հովիտ կիշնէ...

Կարծէք թէ շատ ժամանակ չէ անցել, երբ տաճիկ զօրքը հրով ու սրով խաղաղեցրեց այդ ըմբոստ երկիրը, բայց նորից լսում է ամպերի տակ չարագուշակ գղրդիւնն ու Ալբանիայի խաղաղութիւնը նմանւում է փոթորկից առաջ տիրող լսութեան...

Ոչ միայն մուսուլման արնաւուաներն են յուզուած, Մալիսիայի կաթոլիկ ցեղերի մէջ էլ այժմ յաճախ է շաշում պողպատը... Օր չի լինում, որ ցեղապեաները չը ժողովուեն Դանիէլ աղայի գիւղում խորհրդակցելու:

Այսօր էլ ահա մօտ քսան հոգի. ծեր ու երիտասարդ, ժողովուած լայն ու ցած սրահում,

դուների մօտ պահապաններ դրած, մի ժամկց աւելի է ինչ խորհրդակցում են...

Սենեակի մէջ տեղը, յատակում, կրակէ լեզուներ արձակելով վառում է չոր փայտը, որի շուրջը կիսաշրջան կազմած նստած են լեռնցիք: Խարոյկի բոցեղէն լեզուները արտացոլում են զէնքերի ու զգեստի մետաղեայ զարդարանքների վրայ, բորբոքելով ու վառելով ալբանացիների սկ ու ճաղար, պողպատի նման սառն աչքերը, վերջապէս խառնուելով կապոյտ ծխին դուրս են սողում երդիկից...

Ես վերջացրի խօսքս, ասում է բարձրահասակ ծեր արնաւուտը, որի երեսը ակօսած էր սպիներով, այժմ հերթը քոնն է, Դանիէլ աղա...

Թէպէտ երիտասարդ, բայց իր քաջութեամբ յայտնի մարտիկը ոտքի է ենում ու լնդհանուր հայեցը ձգում ժողովուածների վրայ: Նա խօսում է ցածր, չէ բորբոքում ու նրա ամեն մի խօսքի մէջ հսչում է վստահութիւն ու համոզմունք:

Եղբայրներ, դուք արդէն լսել էք այն բռնութիւնների ու ճնշումների մասին, որ գործ էր գնում մեր դէմ գահազուրկ փագիշանը. այդ բռնութիւնները չը թուլացան և նրա եղբօր ու յաջորդի օրով: Այդ միջոցներից չեն ուզում հրաժարուել ոչ մեծ վեզիրը, ոչ տաճիկ պաշտօնեաները և նրանց հնագանդ զօրքը, մի խօսքով այն ամենը, որոնք կարմիր ֆէսի հետ մի-

ասին իրենց պապերից ժառանգել են ատելութիւն դէպի ազատ ժողովուրդը...

Մի խուլ ժիսոր անցաւ սրահով. արդեօք արտասահնած խօսքերի նկատմամբ հաւանութեան նշան էր այդ, թէ մի սպառնալիք, որ ուղղւած էր բռնակալների հասցէին—դժուար էր ասել: Խոկապէս կարող էր թէ մէկը լինել և թէ միւսը:

—Առաջին անգամը չէ, որ մենք զէնքի ենք դիմում, շարունակեց Դանիէլ աղան. առաջին անգամը չէ, որ մենք արեան հեղեղով ներկում ենք սար ու ձորերը, բայց չը նայած մեր քաջութեան, չը նայած մեր տուած հարուածներին, վերջապական յաղթանակը միշտ մնացել է մեր թշնամիներին... Նրանք թուով շատ են եղել ու նրանց ոյժը մերից անհամեմատ մեծ է եղել:

—Իրաւ է, խուլ կերպով նկատեց առաջնորդներից մէկը:

—Այն, բայց ժամանակը փոխւում է, այդ ոչ միայն մեզ համար է պարզ, այլ և մեր երեխաններն էլ են հասկանում: Շուտով տարին կը լրանայ, ինչ ֆրանկները պատերազմ են մըղում սուլթանի դէմ, և նա պէտք է բոլոր ոյժը լարէ, որ ծովի միւս երեսին գտնուած իր երկիրները պահպանէ: Թշնամու նաւատորմը Արշականական է, Ատամբոլը ահ ու սարսափի մէջ է... Փագիշան այժմ որտեղից պէտք է այնքան զօրք հանէ, որ ողջ Ալբանիան զօրքով

ծածկէ, որ ոչ թէ յաղթութեամբ, այլ իր զօրքի թուով ընկձէ մեզ... Փաղիշահն այս հս զօրք չունի: Հասել է ժամանակը, մօտենում է և վրէժխնդրութեան ժամը... Այժմ, կամ երբէք:  
— Այժմ, այժմ, թնդաց սրահը...

— Մեր մուսուլման եղբայրները ապատամբութեան գէնք են բարձրացրել, հերթը մերն է:

Դանիէլ աղան ձեռքը վեր բարձրացրեց,  
նշան անելով, որ դեռ չի վերջացրել իր խօսքը:

— Այլիս յետաձգել անկարելի է, արտասանեց նա, հենց որ սենեակում փոքր ինչ լուցին,  
— Ռւսկիւրից, Պրիզրէնից ու Սալոնիկից զօրքեր  
են ուղարկել իփեկի սանջակը, Դեակովի մօտ  
ամեն օր կոխւ են մզում, տաճկական զօրքերը  
մօտենում են Հիսինիին...

Վերջին խօսքերն արտասանելով նա լոեց,  
որ տեսնի, թէ իր ունկնդիրների վրայ ինչ տը-  
պաւորութիւն գործեց:

Քսան զոյգ աշքեր լարուած նայում էին  
նրան. ոչ մի ձայն չը խանգարեց այն գերեզմա-  
նային լուութիւնը, որ տիրում էր սրահում: Բո-  
լորն էլ գիտակցում էին այդ լուրի լրջութիւնը  
և խորհրդի էին սպասում:

Դանիէլ աղայի յօնքերը կնճռուեցին. նա  
ծանը կերպով շիկելով ճակատը, կարծես ուզում  
էր վերջին կասկածն իրենից հեռացնել, ապա  
կրակոս աշքերով մի հայեացք ձգեց ժողովա-  
կանների վրայ:

— Զօրքի առաջապահ գունդը երկու գումար-  
տակից է բաղկացած, և թնդանօթներ չունի,  
ասաց նա կտրուկ ու հնչուն ձայնով: Նա զիսա-  
ւոր բանակից առաջ է մէկ օրուայ ճանապար-  
հով. վաղը երեկոյ կը մտնի կանչակի հսկիտը...  
Եղբայրներ, քիչ չէք տեսել իմ պատերազմա-  
կան հմտութիւնը... Ասացէք, հաւատում էք իմ  
ոյժերին...

— Հաւատում ենք, ինչպէս մէկ մարդ, միա-  
բերան ասացին միւս առաջնորդները:

— Այն ժամանակ ասանց ըոպէ կորցնելու,  
թող նա, ով զէնք կարող է վերցնել, պատ-  
րաստուի, մէկ ժամից յետոյ մենք հովիտ կել-  
նենք: Ես առաջնորդելով ձեզ կը շրջապատեմ  
տաճկական առաջապահ գունդը և մինչե զիսա-  
ւոր բանակի հասնելը, երգւում եմ, ոչ մի  
ասկեար այստեղից ողջ չի գուրս գալ... Մենք  
կանչակի մօտ զիրք կը մտնենք և եթէ Աստուած  
կամենայ՝ տաճկաց մնացած զօրքերն էլ այն-  
տեղից այս կողմը չեն անցնիլ...

Պատասխանի փոխարէն, բոլոր արնաւուա-  
ները, կարծես խօսք կապած տեղներից վեր  
կացան ու շտապ դուրս ելան:

Ամենից վերջը դուրս եկաւ Դանիէլ աղան  
և ուզզուեց դէպի իր առւնը, որ միւսների նը-  
ման քարէ մի ինորանարդի էր նմանում, միայն  
շրջապատուած էր բարձր նողէ պատով:

Տասը ըոպէ էլ չէր անցնել խորհրդից յետոյ,  
երբ իրենց տներից դուրս էին գալիս ուսից գը-

լուխ զինուած ալբանացիներ, ու դարպասից ելնելով անյայտանում էին մթութեան մէջ... Այնտեղ, փոքրիկ հրապարակում, որտեղից զառիվայրով շաւիղը ցած էր իջնում, կամաց-կամաց խմբում էր ամբոխն ու, անհամբեր նշանի էր սպասում, որ ճանապարհ ընկնեն:

Երբ բոլորը ժողովուած էին, երեաց և մի բարձրահասակ դէմք, վրան առած կարծ ու բըրդոտ վերարկուն:

— Դանիէլ աղան, շշնջաց ամբոխը:

Մի սուր սուլոց խանգարեց գիշերուայլութիւնը:

Անկանոն շարքերը շարժուեցին ու դանդաղօրէն դիմեցին դէպի ցած...

Ալբանացիների առաջնորդը թշնամիների դէմ ելաւ:

#### IV

Զիադէն սկսել էլ ճանձրանալ: Նա, ինքը գոնէ, այդպէս էր բացատրում իր անորոշ հոգեկան դրութիւնը: Բայց այդ բացատրութիւնը հազիւ թէ համապատասխանէր նրա հոգու խորքում տիրող փոփոխութեանը. մօտ երկու ամիս էր անցել այն օրից, երբ նա իր ամուսնու հետ սարերն էր փախել: Սկզբում թարմ ու մատաղ զգացումները միանգամայն յափշտակել էին նըրան: Յաճախ նրան մենակ թողնող ու ինչոր անյայտ նպատակներով երկրի խորքերը գնացող

Դանիէլ աղայի պատկերը միշտ կենդանի կանգնած էր նրա գիմաց: Սարգ ու կարգի ամեն մի չնչին առարկայ Դանիէլ աղային էր յիշեցնում նրան: Այն միտքը, որ Դանիէլ աղան, որին այնպէս վստահում և հաւատում են արնաւուաները, ամբողջովին նրան է պատկանում, մատաղահաս կնոջ հոգին լցնում էր մի առանձին հաղարտութեամբ և ոյժ էր տալիս Զիադէին համբերութեամբ սպասելու նրա վերադարձին:

Այդպէս էր առաջ... այդ շարունակուեց մինչև այն ժամանակ, քանի դեռ նա գտնւում էր հոչակաւոր ալբանացու անուան հմայքի տակ, երբ այդ հմայքն այնքան զօրեղ էր, որ նա առանց տատանուելու այն գիշեր թողեց այն բոլորը, ինչոր նրա համար այնպէս թանգ էր ու սիրելի և հետեւց Դանիէլ աղային, անցաւ անմատչելի սարերը: Բայց շուտով թոյլ ու ճնշուած միտքն սկսեց ազատուել նրան կաշկանդող երազից: Ամուսնու պատկերի հետ միասին նա սկսեց յիշել իրեն սիրելի ու սովորական հարազատներին... Զիադէն յիշեց թողած Հուսինիի տունը, այն փաղաքշանքը, որով դիմում էին նրան հայրն ու եղբայրը և անխուսափելիօրէն այդ բոլորը համեմատում էր իր ներկայ գրութեան հետ:

Ամուսինը սիրում էր նրան, բայց մի ինչ որ արտասովոր սիրով...

Նա սիրելի էր նրա համար ինչպէս մի նոր ու հետաքրքրական խաղալիք: Նա պահպանում

Եր Զիադէին ինչպէս մի հազուագիւտ ծաղիկ, բայց իր անձնական կեանքում նա նոյն տեղն էր գրաւում, ինչպէս և նրա բարակուտն նժոյգը՝ «Բուրանը» կամ սիրած հրացանը։ Այդպիսի դրութիւն սովորական էր բոլոր մահմեդական կանանց համար, բայց Զիադէն սովոր չէր այդ կեանքին։ Նրա ծերունի հայրն այդպէս չէր մեծացրել նրան և ոչ էլ եղբայրը, որ կեանքը չէր խնայի նրա համար։ Այդ բոլորը դեռ ոչինչ. նա սիրում էր Դանիէլ աղային, բայց կամաց կամաց նրա մէջ զարթնում էին ուրիշ զգացումներ. գեռատի կնոջը ծանօթ չէր թափիծը, որ այժմ ճնշում էր նրան։ Տաճկական զօրքի անյաջողութիւնները համում էին նրան։ Նրա սիրութ ցաւում էր հայրենիքի անյաջողութիւնների համար, նա ազօթում էր իր հայրենակիցների համար յաղթութիւն խնդրելով։ Այդ բոլորին ի պատասխան՝ կարծես իբրև ծաղր, նա լուսում է յանկարծ, որ Սլքանիան ուզում է օգտուել յարմար առիթից և ապստամբել փաղեշահի դէմ։

Երեկոյեան դէմ Դանիէլ աղան խորհրդից տուն վերագրածաւ, նայեց զէնքերը, փամփուշտակալը լցրեց փամփուշտով, ուշազրութեամբ ականջ գրեց, կարծես թէ ինչոր բանի էր սպասում, յետոյ արտասովոր քնքշութեամբ հրաժեշտի ողջոյն տուաւ կնոջն ու տանից դուրս ելաւ։

— Կաց... ուր ես գնում։

— Արշաւանքի... Տաճիկները Հուսինիի դէմ են գալիս... Վաղը երեկոյ ես նրանց կը հանդիպեմ կանչակի մօտ...

Զիադէն արագ ձեռները մեկնեց դէպի ամուսինը.

— Դանիէլ...

Նա յետ դարձաւ շէմքում։

— Ոչ, ոչինչ... խուլ շնչաց երիտասարդ կինը։

— Մի վախենար, թոշնակս, քնքշաբար արտասանեց ալբանացին, չը հասկանալով նրա յուզունքը։ Մի քանի օրից յետոյ տանը կը լինեմ, իսկ գիշատիշ թոշունները հովտում խընճոյք կը սարքեն... Առայժմ մնաս բարով։ Եւ գուռը ծածկուեց, դրսից թարմ օդի հոսանք ներս թողնելով։

— Քար կտրած, Զիադէն լսում էր հեռացող քայլերը. հազիւ լուեցին քայլերը, Զիադէն թուլացած ընկաւ անկողնի բարձերի վրայ ու սկսեց դան հեկեկալ։

Դաւաճան, քո հայրենիքի դաժան թշնամու կին, անցաւ նրա մտքով, շանթահար անելով նրա ուղեղն ու ցաւեցնելով սիրտը։ Նա լալիս էր երեխայի նման հեծկլտալով ու սեղմելով ատամները կարճ ու խոր հոգւոց հանելով. արտասուքով թրջուած գորգը պինդ կաել էր նրա այտերին, բորբոքելով նրա թարմ կաշին։

Ծանր էր շնչում. Թուլացած ու անոյժ նա մոռացութեան մէջ ընկաւ. նա պառկել էր

լուս, առանց գիտակցելու, թէ որքան ժամանակ անցաւ այն ըսպէից, երբ Դանիէլը հրաժեշտի ողջոյն տուաւ նրան:

Այժմ ամեն ինչ պարզ էր: Նա հասկացաւ իր թախիծի բուն պատճառը և հասկացաւ, որ այդ թախիծը ուրիշ անուն ունէր, բայց ուշ էր, շատ ուշ... Անցածն ուղել անհնարին էր... Վառուող ատելութեամբ յիշեց նա Հուսինիի անխօս գիշերը, որ մի ժամանակ նա ուրախութեան ժպիտով էր յիշում...

Մէկը լուս ու կամացուկ քայլերով մօտեցաւ ու կանգնեց նրա առաջ:

— Տիրուհի, դռանն ինչ-որ կին ուզում է քեզ տեսնել:

— Կի՞ն... Բնչ կին, հարցըց Զիադէն, դըժուարութեամբ զլուխը վեր բարձրացնելով:

— Զը դիտեմ, մի ինչ-որ պառաւ է, սև շորերով, երեկի հովտից է...

— Լաւ... թող գայ:

Աղախինը դուրս ելաւ. Զիադէն մնաց պառկած, միայն շուռ եկաւ այն կողմը, որտեղից պէտք է մտնէր անսպասելի հիւրը. բայց հազիւ նրա կուցած իրանը դռնից երևաց, Դանիէլ աղայի ջահէլ կինը ոտքի թուաւ.

— Մէրիմէ, կանչեց նա, — դայեակս... ու նրան ընդառաջ վազեց:

Պառաւը իր ոսկրոտ ձեռներով գրկեց նրան ու արտասուքը հոսեց նրա աչքերից...

Մի քանի ըսպէից յետոյ, նա նստած էր գորգով ծածկած բարձերի վրայ ու շոյում էր Զիադէի հիւսերն ու լսում նրա կցկտուր պատմութիւնը:

— Իմ սիրելի թռչնակ, անուշեկս... ապա իսչպէս անենք: Թախիծից հայրդ կիսախելագար է, իսկ ջահէլ եղբայրդ, Ռահիմ-բաշին, նորից փաղիշահի զօրքերի գլուխ է անցել. և լուրեր են պատում, որ նա արշաւում է դեպի Հուսինի:

— Իմ եղբայրը... Ռահիմը:

— Այո. Նա ասում էր, որ հայրական տանը քո հասցրած անարգանքը տանել չի կարող. և եթէ չյաջողութիւն քեզ յետ տանել, գոնէ պատով կը մեռնի...

— Ռահիմ, կրկնում էր Զիադէն, առանց պառաւին լսելու... Ռահիմ... Վաղը նա կանչակի ձորում կը լինի... Այնտեղ Դանիէլը նրան կր սպասի... Մվ ամենակարող ու ամենազօր Աստուած, ասա՞ ինչ անեմ...

— Քո ամուսինը, զաւակս, այնտեղ կը սպասէ նրան:

— Այս, այս... Լսիր, դայեակս, ալբանացիները գիտեն, որ փաղիշահն այստեղ զօրք է ուղարկում և կանչակի մօտ դարան են մտել... Խեղճ եղբայրս... բայց ոչ, նա չի մեռնի, Աստուած չի թոյլ տայ, որ նրան սպանեն:

Պառաւը զլուխը շարժեց:

— Քող Ամենակարողը ինայէ նրանց: Բայց

Թահիմ՝ բաշու խումբը մեծ չէ, և բանակը նրանից հեռու է գտնւում... Հալած կապարի նման այդ խօսքը թափուում էին Զիադէի սըրտին: Լայն չուած աչքերով, գունատ ու անշարժ, նա լսում էր... յանկարծ կարճ հոգւոց հանելով, ոտքի ելաւ:

— Պէտք է զգուշացնել, գոչեց նա. լսիր, դայեակս, չէ՞ որ կարելի է իմաց տալ եղբօրս... Թող չը գայ, թող սպասի... Ինչու ես լուում...

— Ո՛չ, Զիադէ, ուշ է, օգնելն անկարելի է. կարճ ճանապարհով ալբանացիները ոչ ոքի չեն թողնի, իսկ երկար ճանապարհով հասնելն անհնար է...

Երիտասարդ կինը ծանր շնչելով սարսափաշ հար նայում էր նրան:

— Ուրիշ միջոց կայ, զաւակս... Կարելի է զգուշացնել գլխաւոր բանակին. Թահիմ բաշին իր խմբով կը գիմանայ, մինչև օգնութեան կը հասնեն...

Պառաւը գեռ չէր վերջացրել իր խօսքը, որ Զիադէն սենեակից գուրս թուաւ բակը... չընայած մթութեան նա համարձակ գոմ գնաց ու կանգնեց իր նժոյգի, Բուրամի առաջ որ փոնչալով խոտ էր որոճում: Նժոյգը տիրուհուն տեսնելով ուրախ խրխնջաց, յուզմունքից գողացող ձեռներով նա սանձեց ձիուն, թամբեց, դուրս հանեց ցանկապատի միւս կողմը ու հեծաւ: Զին սլացաւ սմբակներից մի քանի կայծ ար-

ձակելով: Նրա ոտների տրոփիւնը շուտով լոեց գիշերային խաւարում...

Աւելի ուշ, Դանիէլ աղայի տանից ելաւ և պառաւը: Առանց շտապելու նա դէպի դաշտը տանող կածանով ցած գնաց: Նա վախենալու էլ բան չունէր: Ալբանիայում կինն ապահով կարող է անցնել այնտեղով, ուր մահը դարան մտած սպասում է համարձակ տղամարդուն...

Դանիէլ աղայի գիւղում հետեւեալ առաւօտ նկատեցին, որ նրա կինն անյայտացել էր: Տանը մնացած պառաւներն ամենայն սառնութեամբ լսեցին այդ փախուստը: Յաւում էին միայն, որ նժոյգը տարել էր: Ի՞նչ կարելի էր անել. միենոյն է, նրան հասնել չէր լինի. իսկ կինն աղատ է այնպէս, ինչպէս և մարտիկը... Երեկի նա ձանձրացել էր մառախլապատ լեռներում ապրելուց, կարօտել էր հովիտի փարթամ բուսականութեանն ու փախել... Ում ի՞նչ գործն էր:

Իսկ ամուսինը... թող իր կնոջը պահէր. նկ է պարտաւոր ուրիշի կնոջ պահպանել:

Եթէ պառաւներն այգպէս էլ չը մտածէին, այժմ նրանց այդ չէր էլ հետաքրքրում... Նրանց ուշ ու միտքը զբաղուած էր երիտասարդ առաջնորդի արշաւանքով: Նրանք բոլորն էլ անհամբեր սպասում էին կռուի դաշտից եկող ա-

ուաջին լրաբերին. բայց օրերն անցնում էին  
իրար ետևից, իսկ Դանիէլ աղայից սուրհան-  
դակ չէր գալիս:

V

Երկնքում ամպի կտոր անգամ չըկայ: Պայ-  
ծառ արեն այրում-կիզում է երաշտից կիսա-  
մեռ երկիրը: Կենդանի արարածները պահ են  
մտել ողորմելի թոյլ ստուերներում, որ համա-  
րեա թէ չէ զովացնում:

Բայց հեռուն, ուր քարքարոտ ճանապարհը  
կորչում է չորացած թփուտներով պատած ըը-  
լուրներում, երեսում է հազիւ տեսանելի ամպի  
կտոր, որ քամի գնում մեծանում է: Աստիճա-  
նաբար թանձրանում է այն, կորցնելով իւր թա-  
փանցկոտութիւնն ու ձկը. մոխրագոյն թուխ  
գոյն է ստանում ու փուռում կապուտակ եթե-  
րում:

Այնտեղից լուռում է միապաղաղ որոտ. մե-  
տաղի վրայ անդրադառնալով ցոլում է արեը.  
վերջապէս մի մոխրագոյն շարժուող բազմութիւն  
է երեսում լեռներում: Հաստատ կարելի է ասել,  
որ այնտեղ մի խումբ մարդիկ են շարժում...  
ասկեարների զօրաբաժինն է այդ...

Խմբի առաջից գնում է սպիտակ նժոյգը  
հեծած Ռահիմ-բաշին: Նա գեռ երիտասարդ է,  
երեսուն - երեսուն և հինգ տարեկան, բայց ի նը-

կատի ունենալով նրա լայն ճակատի սպին, և  
այն յարգանքը, որ ցոյց են տալիս նրան միւս  
սպաները, կարելի է առանց սխալուելու ասել,  
որ նա նորին մեծութիւն սուլթանի զօրքերի  
մէջ աչքի ընկնող դիրք է գրաւում: Հակառակ  
դէպօւմ Սուլէյման փաշան նրան չէր յանձնի  
առաջապահ զօրքի հրամանատարութիւնը:

Սուլէյմանի գլխաւոր ոյժերը հեռու են մը-  
նացել, իսկ առաջապահ գունդը մի քանի ժա-  
մից յետոյ կանչակի կիրճը կը մտնի: Վատ տեղ  
է այդ: Անցեալ ապստամբութեան ժամանակ  
այստեղ կոտորուել էին փաղիշահի ասկեարները,  
բայց այժմ նրանց առաջնորդում է անպարտելի  
Ռահիմ-բաշին և զինուորները չեն կասկածում  
իրենց յաջողութեանը...

Ռահիմ բաշին շուռ գալով թամբի մէջ,  
գիտում է զինուորների առաջին շարքերը:

— Դէհ, համարձակ, տղերք, երկու վերստ  
էլ անցնենք՝ կը հանգստանանք:

Ամբողջ գունդը կարծես թէ շունչ է առ-  
նում, ուղղուում են խառնուած շարքերը, քայլե-  
րըն աւելի կամոնաւոր են հնչում...

Վերջապէս արել իր վերջին ճառագայթ-  
ներով ոսկեզօծեց լեռներն ու թագնուեց: Երե-  
կոյեան մութը անսկատելի կերպով գրկում է հովի-  
տը, երկինքը ծածկւում է սկ քողով ու արեելեան  
կողմում երկինքը փառում է իր աստղերի լապտեր-  
ները: Ճանապարհը նեղանում, սեղմւում է. նրա

կողերի բլուրներն աւելի ու աւելի են բարձրացնում իրենց գլուխներն ու թփուտն աւելի խըտանում է։ Մի փոքր ևս և կանչակի կիրճը անդարձ կը փակէ իր մէջ միահիմ-բաշու գունդը։ Լուս ասկեարներն առանց այն էլ այժմ անձայն առաջ էին դնում։ Հետախոյզների առաջին շարքերն անյայտացան մառախլապատ ճանապարհում, և երբեմն միայն նրանցից մէկը կամ միւսը վերադառնում էր գնդապետին հաշիւ տալու, որ ճանապարհն ապահով է և կարելի է դադար առնել հանգստանալու նպատակով։

Մահիմ-բաշին կանչեց իր թիկնապահին, ինչ-որ կարգադրութիւն արաւ. նա գլուխ տուեց ու արշաւեց դէպի գունդը։

Մի քանի ըռպէից յետոյ երկու գումարտակն էլ կանգ առաւ գիշերելու նպատակով։

Զախ կողմը ձգւում էր թաւ մութ անտառը, դէպի աջ՝ ոչ շատ բարձր, բայց սեպ կը-տրուած ժայռը, որի վրայ ցցուել էր հինաւուրց մի աշտարակ, իսկ նրանց առաջը ձգուել էր մառախլապատ մռայլ կանչակի կիրճը…

Հաղիւ ասկեարներն իրենց հրացանները ցած դրին, որ կրակէ մի գիծ անտառը ճեղքեց։ Հրացանների համազարկը առելի դղրդիւնով արձագանդ տուեց ու գնդակի տարափը կարկուտի նման տեղաց մթութեան մէջ։ Լսուեցին կատաղի ձայներ ու հառաչանքներ։ Երկու մարդ գլորուեց Մահիմ-բաշու ձիու մօտ. նրա թիկնապահն ա-

ռանց մի ձայն անգամ արձակելու բռնեց իր կուրծքն ու կախ ընկաւ թամբից…

— Հանդարտ, հնչեց զինուորներին լաւ ծանօթ մի ձայն. հրացանը վերցնել… յառաջ։

Գունդը շարժուեց ու աղմուկով անցաւ կիրճի մութ խորքը…

Բայց հազիւ էր մի քանի քայլ արել, որ հրեղէն երկրորդ գիծը ձգուեց նրանց առաջով։ Անտառի կողմից կրկին արձագանդ տալով զըղղգաց նոր համազարկ, նոյնը կրկնուեց և նրանց ետեռնում, լոել էր միայն լերկ ժայռէ պատր, որի վրայ հազիւ երևում էր դիտարանի գլուխը միայն… Գունդը հազիւ թիկունքն այն կողմը դարձրեց, որ զիրք մտնի. այդ բոպէին այնտեղից էլ գնդակէ կարկուտ տեղաց նրա վրայ…

Շրջապատուած ենք, կայծակի արագութեամբ անցաւ Մահիմ-բաշու մտքով։

Զարկերը լսում էին ամեն կողմից, ասկեարների համազարկը ոչ մի կերպ չէին ազդում… Զինուորներն ընկնում էին ինչպէս հասկերը մանգաղի հարուածից… Ամեն կողմից լսելի էին վիրաւորների հառաչանքն ու աղեկոտը ձայները… Ժայռոտ ճանապարհն արիւնով ներկուեց, արիւնը լճանում էր ասկեարների ոտների տակ ու հոսում էր ցած… Երկու անգամ Մահիմ-բաշին փորձեց իր խմբով ճեղքել թշնամու օղակն ու անցնել կիրճի խորքը, բայց երկու անգամին էլ ստիպուած յետ նահանջեց։ Աներենոյթ թշնամու հետ կոիւը

սպանդանոցի փոխուեց, ուր իրար ետևից զոհ էին գնում փաղիշահի ասկեարները։ Փրկութեան յոյս չը կար, Գնդի կէսից աւելին արդէն ընկած էր, մնացածներն էլ հալում էին կրակի դէմ բռնած մեղրամոմի նման... Ռահիմ-բաշին արիւնոտ ու վառօդի ծխից սեացած դէմքով կատաղած մահ էր փնտրում, ամենավտանդաւոր դիրքերը գնալով. ասենք նրանք բոլորն էլ հաւասարապէս վտանգաւոր էին...

Վերջին փորձն էր մնացել. նա իր խմբի մնացած զինուորներին ժողովելով վերջին յարձակումը գործեց դէպի պարսպանման ժայռերը. չորս կողմից գնդակների տարափի տակ ասկեարները կատաղաբար յարձակուեցին... տամնեակներով նրանք գնադակահար ժայռերից ցած էին թափւում։ Կենդանի մնացածները հերոսական ճիգ թափելով բռնում էին ընկածների տեղերը։ Մի քանի բոպէ ևս և բարձրում հրացանաձգութիւնը փոխուեց կատաղի ճիշերի. լսելի էր պողպատի հնչիւնը։ Բայց այդ երկար չը տեսց։ Մեծ կորուստներ տալով ասկեարները հասան ժայռերի բարձունքին և այնտեղ մնացածներին սւինների վրայ առան։

Այժմ Դանիէլ աղան իր ալբանացիներով ցածում մնաց, իսկ բարձրից որոտացին տաճիկների կանոնաւոր համազարկերը...

Բայց նրանցից քչերն էին հասել բարձունքին. հազիւ հարիւր յիսուն-երկուհարիւր մարդ... Մնացածների դիակները փռուել և ծածկել էին

կանչակի կիրճը։ Յաղթանակը մնացել էր արնաւուտներին, բայց նրանց առաջնորդը դրանով չը բաւականացաւ։ Նա ասել էր, որ փաղիշահի զինուորներից ոչ մէկը կենդանի չը պէտք է վերադառնայ այդ կիրճից, և պէտք է ի կատար ածի իր խօսքը...

Ալբանացիների հրացանները քանի գնում աւելի քիչ էին պատասխանում թշնամիների զարկերին... Վերջապէս բոլորովին լռեց... ասկեարները ազատ շունչ քաշեցին. նրանք ուժասպառ էին եղել անհաւասար կուռում. բայց Ռահիմ-բաշին աւելի մռայլ էր. նա հեռագիտակն աչքերին բռնած շարունակ դիտում էր շրջակայ հովիտները...

Մի երկու ժամ անցած ցածում սկսեցին վառուել խարոյկներ։ Բոպէ առ բոպէ նրանց թիւն աճում էր, նրանց շարքը ձգւում էր հեռուն... Դանիէլ աղան իր մարդկանցով կիրճից դուրս եկաւ ու շրջապատեց լերկ ցցուած ժայռ։ Մի երկու ժամ չի անցնի, նրանց օղակը կը սեղմուի և արնաւուտներն իրենց եաթաղաններն ատամներով բռնած ժայռն ի վեր մազցելով կելնեն խողիսողելու Ռահիմ-բաշու մի բուռն մարդկանց... Այլևս ազատութիւն չը կայ։ Նրանք գթութիւն չեն խնդրի, հետեապէս և մինչև առաւօտ առաջապահ գնդից ոչ ոք կենդանի չի մնայ... Սուլէյման փաշան այստեղ կը տեսնի իր մարդկանց միայն այլանդակած դիակներն ու մշտական անարգանքը կը պատի այն

զօրավարի ճակատը, ով իր զինուորներին տարել էր գէպի անխուսափելի մահ...

Այդ միտքը շանթահար արաւ Ռահիմ-բաշուն, նրա ձեռները թուլացան ու հեռադիտակը կախ ընկաւ:

Այն աշտարակը, որի տակ պահ էին մտել զինուորները, երկի առաջին անգամը չէ որ խարոյկվ նշան էր տուել: Գուցէ գեռ լուսաբացին Սուլէյման փաշայի բանակից տեսնեն այն: Ծեր զօրականը կը հասկանայ, որ նրա առաջապահ գունդը ոչնչացել է և այլ ևս յոյս չի գնի նրա վրայ:

Իշխանական, սառը հրաման տուեց նա...

Մի ակնթարթում ասկեարները ժողովեցին չորացած ցաքիներ, նրանցով լցրին աշտարակի առաջին յարկը, և շուտով ծխի թանձր քուլաները փոխուելով հրաշէկ բոցերի, դուրս եկաւ նրա վերնայարկից...

Անցաւ մօտ մի ժամ և յանկարծ հեռում, ալբանացիների թիկունքին, անտառապատ լեռների բարձունքում ևս վառում է նման կարմրագոյն մի խարոյկ, որ քանի գնում մեծանում է ու կարմիր լուսով վառում երկնակամարը...

Տեսել էին նշանն ու պատասխանում էին:

Սուլէյմանը մօտ է իր բանակով և շտապում է օգնութեան հասնել Ռահիմ-բաշուն:

## VI

Հինգ օր անցած, այն գիւղը, որտեղ ապրում էր Դանիէլ աղան, եկաւ մահմեղական առաջնորդ իւսուֆ աղան և հարցնում էր, թէ հովտից ինչ լուր կայ: Բայց նրան պատասխանող չը կար. նա էլ մնաց, որ արշաւանքի գնացած եղբայրներից մէկն ու մէկը գայ:

Երկու օր յետոյ, արկի մայր մտնելուց առաջ բակում լսուեց ամենքին ծանօթ Դանիէլ աղայի ձայնը. նա երևաց...

Իւսուֆ աղան արագ նրան ընդառաջ գնաց, բայց յանկարծ կանգ առաւ շուրած առաջնորդի արտասովոր դէմքը տեսնելով:

Ճանապարհի փոշին ծածկել էր նրա թուխ դէմքը, որի վրայ երեսում էր լերդացած արեան հետքը: Աչքերը տեսնդային փայլով վառում էին, չորացած շրթունքները ջղածգաբար ցընցւում...

— Հը, ինչ է, յաղթութիւն—գոչեց իւսուֆը ու մնաց սառած, պատասխանի սպասելով:

— Յաղթութիւն... բայց ոչ մեզ համար... և Դանիէլը գլուխը կախեց. նա դժուար էր շընչում...

Իւսուֆ աղան մի բանի անվճռական քայլ արաւ ու յենուեց պատին: Սենեակում տիրեց մեռելային լոռութիւն: Լսելի էր միայն երկուսի ծանր շնչառութիւնը:

— Դէն, գնանք թէ չէ:

Դանիէլ աղան ցնցուեց ու լուս դիմեց  
դէպի դուռը: Մահմեդականը հետեց նրան:

Այլևս ոչ մի խօսք չասելով, նրանք անցան  
մի քանի նեղ փողոց. իջնելով ժայռերում փո-  
րած նեղ անցքով հասան մի փոքրիկ հարթու-  
թեան, որ կիսաբոլոր պատուած էր մեծ քարե-  
րից դարսած մի պատով: Նրա ազատ եզերքը  
կախուած էր անյատակ անդունդի վրայ: Զորս  
ծերունիներ ու մի երիտասարդ ալբանացի, որ  
ծանր վիրաւորուած լինելու պատճառով մնացել  
էր գիւղում, յետ դարձան քայլերի ձայն լսելով,  
լոելեայն նրանց ճանապարհ տուին, նորից անց-  
քը փակեցին:

— Լսիր, արնաւուա, ասաց իւսուֆ աղան,  
անցնելով Դանիէլին և նրա գիւղում կենդանի  
մնացած մարդկանց մէջ. դու գիտես լեռնցինե-  
րի խիստ օրէնքը—որ յաղթուած առաջնորդին  
դատում է նրա ժողովուրդը:

— Հարցցո՞ւ, ես սպասում եմ:

— Ո՞ւր են մեր եղբայրները, որոնց դու  
առաջնորդեցիր դէպի կանչակի կիրճը:

— Այնտեղ մնացին:

— Բոլորը, ոչ ոք չազատուեց:

Դանիէլ աղան լուս գլուխը կախեց:

— Այժմ կարող ես պատմել. լուսմ ենք  
քեզ...

Առանց գլուխը բարձրացնելու, խուլ, հա-  
մարեա անլսելի ձայնով Դանիէլ աղան սկսեց իր  
ցաւալի պատմութիւնը: Նա պատմեց, թէ ինչպէս

էր դիրք մտել նրա խումբը հին աշտարակի մօտ,  
ինչպէս ասկեարները մօտեցան կիրճին և ինչ-  
պէս գիմաւորեցին նրանց: Պատմեց սարսափելի  
կոտորածի մանրամասնութիւնները, մի քանի  
խօսքով նկարագրեց տաճիկների յուսահատական  
յարձակումն ու աշտարակին տիրանալը... Պատ-  
մեց, թէ ինչպէս արնաւուաները սպանեցին վիրա-  
րաւորներին ու կիրճից դուրս եկան...

— Կաց, կաց... վերջապէս ընդհատեց նրան  
իւսուֆ աղան, հւը մնաց ապա մեր պարտու-  
թիւնը, ինչպէս կոտորուեցին մեր եղբայրները:

— Ես ասում եմ միայն ինչ որ եղել է...  
Մենք նրանց համարեա բոլորին էլ կոտորեցինք,  
հազիւ միայն երկու հարիւր մարդ իրենց գըլ-  
խաւորի հետ միասին ապաստանեցին հին աշ-  
տարակի մէջ: Յաղթութիւնը մերն էր. փառա-  
ւոր յաղթանակ, բայց մի քանի ժամից յետոյ  
իմ խումբը ամբողջապէս կոտորուեց և դրա  
յանցանքն իմն է: Գիւղից հեռանալիս ես խօս-  
տացայ, որ զինուորներից ոչ մէկը կենդանի չը  
պէտք է վերագանայ և ուզեցի անպատճառ ի-  
րագործել խոստումս... Բարձրութիւնն ամեն  
կողմից շրջապատեցի և յարձակուեցինք այնտեղ  
պահուած մեր թշնամիների վրայ: Բայց հազիւ  
սուլացին առաջին գնդակները, որ Սուլէյմանի  
բանակը երեաց մեր թիկունքին, և ոչ թէ Ռա-  
հիմ բաշին, այլ մենք էինք շրջապատուած թըշ-  
նամիներով... Կուտում էինք առիւծների նման,  
բայց անհաւասար էին մեր ոյժերը... Արշալոյ-

սին ամենից վերջինը ես ընկայ... Երբ ուշքի եկայ, արևը թեքուել էր դէպի ծովը և տեսայ, որ արնաւուաների գիակները ծածկել են մերկ գետինը... Բոլորը մեռան... Սատանան էր քշել ծեր փաշային ու մէկ օր առաջ հասցրել Կանչ շակի կիրճը...

— Սատանան չէ, այլ քո կինը, կարձ վրայ բերեց ծերերից մէկը:

Դանիէլ աղան ցնցուեց և լայն չուած աշքերով նայում էր ծերունուն:

Այս, ոռւ կրկնակի մեղաւոր ես, որ քո սնափառութեան համար մեր ամբողջ ցեղը դէպի մահ տարար և կորստի մատնեցիր. մեղաւոր ես, որ քո յարկի տակ պահում էիր ալբանացիներիս թշնամի մի ժողովրդի աղջիկ, որ տաճիկներին զգուշացրեց մեզ դաւաճանելով:

Երիտասարդ արնաւուար մնացել էր սառած, առանց խօսք արտասանելու:

— Այժմ, մեր բոլորի արհամարհանքն է միայն քո բաժինը, դանդաղօրէն շարունակեց ծերունին. բայց ինկատի ունենալով ու յարգելով քո անցեալը, մենք վճռեցինք աւելի թեթև պատժի ենթարկել քեզ... Դու պէտք է մեռնես:

— Լսեցիր, ասաց իւսուֆ աղան մեկնելով ձեռքը դէպի դատապարտուածը.

Մեռիր:

Դանիէլը երկու ձեռքով բացեց իր կուրծքը դէպի ինքն ուղղած հրացանների դիմաց,

բայց յանկարծ վճռական մի շարժումով յետ քաշուեց:

Բոլորը զարմացած նրան նայեցին:

Թուլութիւնն արգեօք վերջին վայրկեանին ընկճեց աներկիւղ ու միշտ համարձակ առաջնորդին:

Ոչ. նա համարձակ բարձրացրեց գլուխը ու նրա գատաւորները նորից տեսան առաջուան Դանիէլ աղային:

— Հերիք է, եղբայրներ, արտասանեց նա մետաղի նման հնչուն ու հպարտ ձայնով. իջեցրէք ձեր հրացանները. ես չեմ կամենում, որ հայրենիքիս զաւակների ձեռքով ուղղած գնդակները խլեն իմ կեանքը, որը խնայեցին թշնամիների զէնքերը... Մնաք բարով:

Համարձակ ու վճռական քայլերով մօտեցաւ նա ժայռի եղերքին, ձեռները խաչեց կըրծդին ու ընկաւ ցած:



ՀՐԱՏ. ԱԺ. Ա. ԲՈՒԺՈԽՎԵԱՆԻ

Հայ տպագրութեան 400 և տառերի Գիւտի 1500-ամեայ  
յոթեանի յիշատակին

1) Կորած Սարը և Ռոկէ Կուռքի դանձը	20 կ.
2) Փոքրիկ պատմուածքներ	20 »
3) Գորիլլա և ուրիշ պատմուածքներ	20 »
4) Երեք պատմուածք	20 »
5) Անտառի զաւակները և ուրիշ պատմուածքներ	20 »
6) Կրթական ճանապարհորդութիւնն	20 »
7) Պէտք է հետեւել	20 »
8) Օրիորդ Ֆրիկեստա	20 »
9) Զօրավետ Տեմպեստան	20 »
10) Ալկմահարի ռոկին	20 »
11) Զօրավարի ընծան	20 »
12) Փոքրիկ վայրենին	20 »

Մեր բժշկա-առողջապահական հրատարակութիւնների  
պահեստը գտնւում է «Գիւղատնտեսի» խմբագրատանը:

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
ԺԱՂԱՎՐԱԿԱՆ ԲԺՇԿԱ-ԱՐՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊՐԱՊԱՐԱՆ

«Ազգային գրադարան»



NL0166325

Այս և ապագայում հրատարակուել-  
լիք գրքերից այս սերիան յատկաց-  
ւում է «Նուէր Մանուկներին» ըն-  
կերութեան օդտին։